

**Գարեգին Նժդեհի ծննդյան  
125 ամյակի առիթով**

**ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ**

Ժողովուրդները այն չափով են ստեղծագործել ինքնապաշտպանունակ, ինչ չափով որ նրանք տեր են մի կուռ եւ վսեմ աշխարհայեցողութեան: Դա՛ է իմաստաւորում, ներդաշնակում եւ նպատակայարմարօրէն ուղղում ժողովուրդների առած քայլերը:

Աշխարհայեցողութեան - այդ լուսարծակի - պակասի պատճառով՝ հայութիւնը շարունակում է մնալ ենթակայ չար պատահականութեանց, եւ այդ իսկ պատճառով՝ յաճախ աղիտւում է: Աշխարհայեցողութիւնը նրան վերաքննել ու վերաիմաստաւորել պիտի տայ մի շարք հասկացողութիւններ, որով եւ՝ պիտի արագացնէ նրա վերանորոգումը:

Որո՞նք են այդ հասկացողութիւնները:

**- Կրօն:**

Կրօնականութեան պակաս, ասել է՝ աստուածութեան, սրբութեան զգացումի պակաս, որի պատճառով հոգեւոր շփոթի է մատնուած օրուայ մարդկութիւնը:

Հակառակ իր ստեղծած մեծ քաղաքակրթութեան՝ մարդը այսօր էլ դեռ աւելի կաւ է, քան՝ ոգի: Այդ իսկ պատճառով, նա յաճախ առհաւօրէն մղւում է ընդվզելու այն բոլոր զսպիչ արժէքների, ճշմարտութեանց եւ սրբութիւնների դէմ, որոնք կոչուած են սանձուած պահելու անասունն ու անասնականութիւնը նրա մէջ: Եւ միշտ էլ բարոյապէս տկարացած մարդը իր անկումն արդարացնելու հաշուով, փնտռել է մի տեսութիւն, մի դաւանանք, մի իմաստասիրութիւն: Մեր օրերի հակակրօն հովերը պիտի բացատրել մարդկային տիպի հոգեւոր անկատարելութեամբ: Առողջ հոգեվիճակ չէ՛ անկրօնութիւնը: Մարդ միշտ էլ նախ հեռանում է իր նմաններից եւ ապա յետոյ՝ իր Աստուծոց: Ո՛վ հեռանում է կրօնից՝ անձնասպանօրէն կտրում է իր հոգեւոր զարկերակը: Իր արարչի դէմ զործողը պիտի չքաշուի գործել եւ իր նմանների դէմ: Կրօնը - իմաստասիրօրէն առնուած - միայն արարածի եւ Արարչի յարաբերութիւն չէ՛, այլ եւ՝ մարդու եւ մարդու, անհատի եւ հաւաքականութեան, անձի եւ ճշմարտութեան յարաբերութիւն: Կոյր պատահականութեան ծնունդ չէ՛ տիեզերքը,

Եւ ես միակ չեմ տիեզերական անսահմանութեան մէջ - այդ սփոփարար հաւատքն է տալիս մեզ կրօնը: Կրօնաշունչ է, ընդհանրապէս, կեանքի մասին իդեալիստական ըմբռնում ունեցող ամէն մարդ: Նա, ո՛վ ընդունում է Աստուծոյ գոյութիւնը՝ ընդունում է նաեւ իր պարտականութիւնը հանդէպ գերագոյն իրականութեանց - ազգ, հայրենիք, պետութիւն: Ուզո՞ւմ էք խորապէս ճանաչել մէկին՝ խօսէ՛ք եւ խօսեցրէ՛ք նրան Աստուծոյ մասին, եւ նա իր պաշտանքի կամ անհաւատութեան միջոցաւ պիտի մատնէ իր հոգեւոր հասակը: Անաստուա՞ծ ես, ասել է՝ զուրկ ես սրբութեան նուիրումից, պարտականութեան զգացումից. ասել է՝ վաղ թէ ուշ դու պիտի դաւաճանես նմաններիդ: Կեղծ եւրոպականութեան գերի՝ հայ կուսակցութիւնները կրօնական պաղութիւն մտցրին մեր ժողովրդի մէջ: Մարդկութեան թշնամի է ամէն «գիտնական», որ թութակում է «գիտութիւնը ո՛չ կրօն ունի, ո՛չ էլ հայրենիք»: Մեր Երկրագնդի վրայ անհայրենիք, անցեղ եւ անաստուած է մարդկային տկարութիւնը, ստորութիւնը միայն:

Գիտութիւն, կրօն՝ սրանք թշնամիներ չեն, այլ՝ զինակիցներ, որոնցից մէկը գործում է մտքի, միւսը՝ սրտի միջոցով: Չարութիւն է շնչում ամէն անկրօն: Մարդկային անհատը միայն այն չափով է ընկերային, ինչ չափով որ դա կրօնաշունչ է: Կրօնապէս տկարացա՞ւ մարդկութիւնը - եւ ահա՛ այլեւս երկինք չունի նա. փլաւ նրա յոյսերի աշխարհը. այսօր այնտեղ էլ մահն է գործում իր դէմ:

### **- Մշակոյթ:**

Չայեացքը երկնքից չկտրող սուրբը, կռուից վերադարձող յաղթական զինուորը, իր ժողովրդի ցաւերն եւ ուրախութիւնները երգի վերածող աշուղը, արուեստագետը՝ գեղեցիկի երկրպագու, իմաստասէրը, պետական գործիչը, բարերարը, գիտութեան մարդը - սրանք բոլորը, իրենց միաբան եւ ստեղծագործ դեգերումներով, նպաստում են իրենց ժողովրդի մշակոյթին: Արժէքներ՝ գիտական, գեղարուեստական, բարոյական - ահա՛ մշակոյթը: Աւելի ճիշտը՝ դա արժէքների նուիրապետօրէն կազմակերպուած ամբողջութիւն է:

Սրբագրե՛նք այն մեծ մոլորանքը, ըստ որի՝ գոյութիւն ունի մի ընդհանուր, միջազգային, համամարդկային մշակոյթ: Միջազգային է քաղաքակրթութիւնը, նաե՛ւ ապակրօն, եւ այդ է պատճառը, որ դա խեղդում է մշակոյթը: Կեղծի՛ք է նման մշակոյթը, անգոյ: Ճշմարիտ մշակոյթը միշտ էլ կրում է տուեալ ժողովրդի անհատականութեան կնիքը: Ամէն ժողովուրդ՝ իբրեւ անկրկնելի անհատականութիւն, ունի իր զարգացման - իր ինքնակառուցումի եւ ինքնայայտնաբերումի ուրոյն ճամբաները: Օտար մշակութային արժէքների իւրացումը - մասնաւորապէս նրա արտաքին

փայլի, նրա բացասական կողմերի իւրացումը - տկարացումն է իւրացնողի ազգային ոգին: Չկայ՝ մշակոյթ առանց կրօնականութեան զգացումի: Ցամաքում են նրա ստեղծագործ խանդի աղբիւրները, հէնց որ դա դառնում է նիւթապաշտիկ: Հայը պիտի դաւանի <հոգու> առաջնութիւնը նիւթի նկատմամբ, եւ աշխատի, որ հայ մշակոյթը ո՛չ թէ տօնուի տարին մի անգամ, այլ՝ իբրեւ հոգեւոր արժէքների ամբողջութիւն՝ ապրուի ամէն օր: Ժողովուրդներն իրենց մշակոյթի մէջ դնում են իրենց կատարելութեան ձգտումը:

Մարդս այն է հոգեւորապէս, ինչ որ է իր ստեղծած մշակոյթը:

Մի այլ մոլորանք: Արդեօ՞ք ամէն ժողովուրդ կուլտուրական է, քանզի լեզու եւ գրականութիւն ունի: Ո՛չ, ի հարկէ: Ճշմարտապէս կուլտուրական կոչուելու համար բաւական չեն գրողն ու գիրքը, գիտնականն ու գիտութիւնը: Կասկածելի է այն մշակոյթը, որի ստեղծիչի հոգեւոր կեանքում աւելի փուշ ու տատասկ են աճում, քան՝ բարութեան ծաղիկներ: Բնաւ կուլտուրական չէ՛ ներքին իրերակերութեամբ բռնուած ժողովուրդը: Մշակոյթը ենթադրում է սրտի ջերմութիւն, մարդկայնութիւն, խղճմտանքի արթնութիւն, մտածումի եւ յարաբերութեանց ազնուութիւն, նպատակների վսեմութիւն - արժէքներ, որոնց պակասի պատճառով օրուայ հայ կեանքը վերածուած է դժոխքի:

Մինչեւ որ մեր զոյգ սուրբերին՝ Սահակ-Մեսրոպին չմիանայ մտածումի, ապրումի եւ գործի ազնուութիւնը՝ պիտի չկարողանամ առանց անօթախառն ցաւի մեզ կուլտուրական անուանել:

### **- Ղաստիարակութիւն:**

Ազգային նկարագրերի եւ ճակատագրերի տարբերութիւնը ենթադրում է վախճանաբանութիւնների տարբերութիւն: Գոյութիւն չունի՝ եւ չի՛ կարող ունենալ կրթական ընդհանուր իդէալ: Ամէն ժողովուրդ իր կրթական իդէալն ունի, որ բղխում է իր ոգուց եւ կարիքներից: Մեռեալ միակերպութիւն չի՛ վերցնում դաստիարակութիւնը: Ժողովուրդներն իրենց աշակերտող սերունդը պատրաստում են համաձայն իրենց հոգեբանութեան եւ կարիքների: Ազգային չէ՛ հունամիտարիստական կոչուած դաստիարակութիւնը: Հայրենատիրութեան հզօր կամքով օժտուած ցեղամարդը պիտի լինի անհայրենիք հայ դպրոցի իդէալը: Լուսաւորութիւնն առանց ազգային մեծ նուիրումի՝ անհատը դարձնում է յոռետես, եսական եւ ցեղօրէն անպետք: Հայ դպրոցը չգիտէ՛, չգիտէ՛ ամենէն էականը, որ հող թէ հոգի մշակելու եւ նրանց տիրելու համար նախապայման է նրանց խորապէս ճանաչելը: Ցեղաճանա՞չ են օրուայ մեր ուսուցիչները: Խօսքս բացառութիւնների մասին չէ:

**- Մարդկություն:**

Փորձեցէ՛ք ազգային ոգին դատարկել այն բովանդակությունից, որ պատմությունը կուտակել է նրանում, եւ դուք ազգը կը վերածէք մի դիմազուրկ զանգուածի:

Մարդ եւ մարդկություն հասկացողություններն, ընդհանրապէս, որոշ իմաստ են ստանում միայն այս կամ այն ազգի ոգու միջոցաւ: Ազգային հանճարն է որոշ բովանդակություն հաղորդում համամարդկայինին: Ազգութեանց փլատակների վրայ ճշմարիտ մշակոյթ չի՛ կարող ծաղկել: Տուեալ ազգութիւնից դուրս՝ կեղծ են մարդն ու մարդկութիւնը:

Մարդկայինը ազգայինին ներդաշնակելով՝ շահում է թէ՛ մէկը, թէ՛ միւսը: Եւ, ընդհակառակը, ազգայինը «համամարդկայինին» զոհելով՝ կորցնում է թէ՛ ազգը, թէ՛ մարդկութիւնը: Ո՛չ թէ մարդն, ընդհանրապէս, որ անգոյ մի բան է, այլ՝ դիմագծօրէն ազգային մարդը, որ խորիում էր ազգութեան միջոցաւ. մարդը, որ բովանդակում է իր հայրենի բնութիւնն ու պատմութիւնը: Օրուայ մարդը, աշխարհաքաղաքացիական խորթացուցիչ վարդապետութիւնների ազդեցութեան տակ, կորցնելու վրայ է իր իրական հոգեւոր կերպարանքը, իր բնացեղային էութիւնը: Անհրաժեշտ է մի արմատական յեղափոխութիւն, մի դարձ անարիւն վերացական մարդկայնութիւնից՝ դէպի օրգանականը, դէպի ցեղամարդը - իրական մարդը, որն իր հողին եւ ցեղին կապուած է իր էութեան բոլոր թելերով:

«Եւրոպական մարդկութիւն» (ԺԸ. եւ ԺԹ. դարերի), «Յամաշխարհային մարդկութիւն» (Ի. դարի) - ես չեմ հաւատում ո՛չ մէկին, ո՛չ էլ միւսին: Եթէ գոյութիւն ունեցած լինէր եւրոպական մարդկութիւն՝ տեղի պիտի չունենային եւրոպականութեան համար դարերով ասիական խաւար ոյժերի դէմ ճակատած մեր ժողովրդի աննախընթաց ջարդերը:

**- Անհատ:**

Դասակարգային սոցիալիզմը, քարոզելով սէր դէպի հեռաւորը - երբ համազգի մերձաւորների մեծագոյն մասը վատասերուում էր թշուառութեան մէջ - հակամարտութեան մէջ դրեց անհատն ու հաւաքականութիւնը, եւ այսպիսով խախտեց ազգն իբրեւ հոգեւոր ամբողջութիւն:

Անհատ, դու ազատ ես երջանկութիւնդ կառուցելու անգամ նմաններիդ դժբախտութեան վրայ - այս էր երէկ եւ է՛, մասամբ, եւ այսօր: Իրերի այդ անբնական ու անբարոյական դրութեան մէջ, մարդկային բարոյական միտքը որդեգրեց ընդհանրապաշտութիւնը (ունիվերսալիզմը) իբրեւ հակոտնեայ՝ անհատապաշտական լիբերալիզմի:

Անհատ, ոյժերդ միացուր արիւնակիցներիդ ոյժերին՝ յանուն մեծ ամբողջի երջանկութեան - այս է օրուայ եւ վաղուայ ընկերային հրամայա-

կանը: Այլ խօսքով՝ անհատն իր բարիքը պիտի փնտռէ հանրութեան բարօրութեան մէջ: Ո՛վ հակադրում է անհատն ընդհանրութեան՝ մեղանշում է թէ՛ մէկի, թէ՛ միւսի դէմ: Ազգի կեանքից, բովանդակութիւնից դուրս ոչինչ է անհատը:

Ընդհանրականութիւնն է կամուրջ ձգում անհատների էութեանց միջեւ: Եւ ոգեխառնուելով միայն անհատը դառնում է հոգեւոր անձնաւորութիւն - արժէքաստեղծ ոյժ: Դասակարգային վարդապետութիւնները, պառակտելով ազգը, զայն վերածում են դիմազուրկ զանգուածների: Զանգուածն սպանում է ցեղազգացումը, առանց որի անհատի մէջ մեռնում է նաեւ ազգականութեան զգացումը: Ահա՛ թէ ինչո՞ւ մենք ժխտում ենք լիբերալիստօրէն խորհող եւ գործող անհատն ու դասակարգը եւ դաւանում ազգն իբրեւ արժէքային անբողջութիւն:

### **- Ընկերային խնդիր:**

Ո՛չ թէ սոցիալիստը, այլ՝ սոցիալական մարդը: Լիբերալիզմը - ֆրանսական յեղափոխութեան այդ թունաւոր պտուղը պղծեց մարդկային բոլոր հոգեւոր հասկացողութիւնները: Դա օրինականացրեց աղքատութիւնը, որով եւ՝ ընկերային քողարկուած անբարոյականութիւնը: Միեւնոյն ժողովրդի ծոցի մէջ մերձաւորին փշրանք նետելը հռչակեց բարեգործութիւն: Անհատի իմ իրաւունքը ե՛ւ քո իրաւունքն է, ինչպէս քո պարտականութիւնը նաեւ ի՛մ պարտականութիւնն է:

Ապրելու եւ անկաշկանդ կատարելագործուելու իմ բնական իրաւունքը պայմանաւորում է իմ սեփական պարտականութեամբ՝ յարգելու նմաններիս նոյն իրաւունքը: Հաւասարապէս հակաընկերային են այն անհատներն ու ընկերային խաւերը, որոնք ասում են իրենց մասին՝ «ես ամէն ինչ եմ» կամ՝ «ես ոչինչ եմ»: Ազգերի կեանքում միայն մեծ ամբողջն է «ամէն ինչ», եւ ո՛չ ոք իրաւունք ունի լինելու «ոչինչ»: Ո՛չ թէ սոցիալիստը, այլ՝ սոցիալական անհատը - ահա՛ նոր բարոյականութիւնը, որով լուծում է ընկերային խնդիրը եւ վերջ տրուում ժողովուրդների ներքին իրերակերութեան:

### **- Մտածողութիւն:**

Մեր երկրի մարդը նա՛խ կը մտածէ եւ յետոյ կը խօսի - հայկական այդ մի հատիկ առածը կը բաւէ հաստատելու արիականութիւնը մեր ցեղի եւ մեր մտածողութեան: Ցեղօրէն առողջ հայու մէջ խոր է յարգանքը դէպի միտքը: Նրա մտածողութիւնը օրգանական է, իր խորքում՝ բարոյական: Դա իր սնունդն առնում է գոյութեան արմատներից, եւ հենց սրանում է գաղտնիքը իր արտայայտութեան միջոցների անբաւ հարստութեան:

Դժբախտաբար, ազդեցությունները իրենց կնիքը պիտի դնեին մեր մտածողության վրայ՝ մասնաւորապէս Յայաստանից դուրս: Ուշացաւ, շատ ուշացաւ մեր ազատագրումն օտար մտածողութիւնից:

Արդարեւ, աղքատ չէ՛ հայ ուղեղը, բայց վերջին տասնամեակներուն հայութիւնը մեծ իմաստուններ - խրիմեաններ չծնաւ: Հոգեւորապէս պաղ է հայ մտածողութիւնը - պաղ է հայ մարդու մտքի կորովը, դրա համար էլ դա դժուարանում է թափանցել իրերի եւ էութիւնների խորքը: Նրա մտածողութեան պրոցեսը տեղի է ունենում կրքերի ճնշման տակ: Կուսակցական նեղմտութիւնն է վարում ամէն մի եզրակացութիւնը: Մեր կեանքում, հրապարակի վրայ, յաճախ կը տեսնէք. կեղծիքը՝ ճշմարտութեան քղամիղը հագած: Առաւելապէս կուսակցութիւնները զարգացրին մտքի այդ աճաբարութիւնը:

Հայ մարդն այսօր աւելի երեւակայութիւն ու կիրք է, քան՝ իմացականութիւն, իսկ նմանը - անընդունակ առարկայական ճշմարտութեան - հեշտութեամբ կտրուում է իրականութիւնից եւ ամէն ինչ կառուցում օդի մէջ:

Ազգերն իրենց ճակատագիրը բարւօքելու մի հատիկ միջոց ունեն - պատճառագիտական մտածողութիւնը: Այդ մտածելակերպն է պակասում օրուայ հայուն: Այդ պակասով է պայմանաւորուում մեր դժբախտութիւնը: Գիտական է այդ մտածողութիւնը: Անհատներն ու հաւաքականութիւնները սրա միջոցով են ազդում անցքերի ընթացքի վրայ եւ իրենց զերծ պահում դիպուածի հարուածներից:

Ոգեսպառուածի մտածողութիւնը ժխտական է լինում:

Այդպիսին է օրուայ հայկականը: Ազգի հետ եւ ազգի առջեւ խօսողի համար ներելի չէ՛ մտածումի ստորնութիւնը:

«Սովորեցէ՛ք լաւ մտածել - այդ է բարոյականի հիմքը»:

Սովորեցէ՛ք հայօրէն մտածել - դա՛ է ազգային բարոյականի հիմքը:

### **- Պատմութիւն:**

Մի ժողովրդի ինքնագիտակցումը հնարաւոր է միայն իր պատմութեան միջոցաւ:

Ժողովուրդներն այն չափով են ազգ, ինչ չափով որ բիրեղացած եւ զօրաւոր է այդ ինքնագիտակցութիւնը: Չկայ՝ աւելի մեծ յանցանք, ուրացում, քան՝ իր սեփական պատմութեան անծանօթ լինելը: Նմանը - զուրկ պատմական զգացումից եւ յիշողութիւնից - ազգ չէ՛: Սեփական պատմութիւնն է մեր իմաստուն խորհրդականը, մեր ոգու դայեակը, մեր ազգային խղճմտանքի վարիչը:

Իր պատմութեան ծանօթը երկու բան լաւապէս գիտէ - նա գիտէ, թէ

ի՞նչ կարող է անել եւ ի՞նչ պետք է անել՝ Հայն ու Հայաստանը յաւերժացնելու համար:

Ցեղօրէն անհիմքնաճանաչին պակասում են հէնց այդ գոյգ բաները, որ ասել է՝ սեփական ճակատագրի դասերից օգտուելու եւ սեփական հայրենիքին օգտակար լինելու կարելիութիւնը:

Քանի դեռ մեր ժողովրդին տրուած չէ՝ իր պատմութեան իմաստասիրութիւնը - նա պիտի չկարողանայ օգտուել նրանից: Հայութեան ճակատագրական ծառայութիւն մատուցած կը լինի նա, ո՛վ կ'իմաստասիրէ նրա պատմութիւնը:

### **- Կուսակցականութիւն:**

Մի ամբողջ յիսնամեակ է, ինչ հայութիւնը միջկուսակցական պայքարներով, ներքին ճակատի վրայ, սպառում է իր ոյժերը եւ բաց աչքով ծառայում իր գոյութեան թշնամիներին: Մեր վերջին կիսադարն եկաւ հաստատելու, որ հայ մարդը, ընդհանրապէս, ատակ չէ՝ կուսակցականալու՝ առանց չարիք դառնալու իր ժողովրդի համար: Այդ իրողութիւնը ունի իր հոգեբանական պատճառները, իր բացատրութիւնը: Անշուշտ, ճիւղաբարձ չէ՝ ամէն կուսակցականացած հայ, բայց միջկուսակցական պայքարներում նա հեշտութեամբ դառնում է այդպիսին: Տուրք տալով կեղծ եւրոպականութեան՝ հայ կուսակցութիւնները իրենց թշնամին եւ հակառակորդը փնտռեցին իրենց ժողովրդի ծոցի մէջ, եւ խախտելով ազգի հոգեւոր ամբողջականութիւնը՝ թուլացրեցին ճակատագրի կապը արիւնակիցների միջեւ: Միջկուսակցական պայքարատենչութիւնը ենթակաների մէջ մշակեց բարոյական անխտրականութիւն, որով՝ սովորական դարձան պարբերական սեւացումները, դաւերը անգամ՝ սպանութիւնները: Շոյելով կուսակցական պատկանելիութեան զգացումը՝ կուսակցութիւնները իրենց հետեւորդների մէջ տկարացրին ցեղ-ազգային գիտակցութիւնը: Տկարացաւ հայկականը ի հաշիւ խմբակցականի: Նրանք դարձան փակ հասարակութիւններ՝ հասարակութեան մէջ, որով՝ մի զատիչ պատ իրենց եւ ազգի կենդանի ոյժերի միջեւ:

Դարձասէր հայը՝ կուսակցականալով՝ դառնում է անզիջ, քանզի կուսակցութեան մէջ նա կորցնում է մտածողութեան ու խղճմտանքի անկախութիւնը եւ սկսում խորհել, զգալ եւ գործել կանոնադրօրէն:

Համակ ատելութիւն է օրուայ կուսակցականութիւնը: Ծիծաղ եւ արգահատանք են շարժում հայ կուսակցութեանց երեմիականները համերաշխութեան մասին: Իմաստասիրօրէն տգէտ՝ նրանք չեն հասկանում, որ ամէն ատելութիւն անկարելի է դարձնում ճանաչումը, որով եւ՝ իրար

հասկանալը: Բերգսոնեան փիլիսոփայութեան յայտնաբերած այդ ճշմարտութեանը դեռ անծանօթ է հայ կուսակցականը:

Հասկանանք, վերջապէս, քանի ուշ չէ, հասկանանք, որ հայը պատճառաւ չունի՝ կուսակցականանալու: Իսկ մեր ժողովրդի թուական տկարութիւնը, մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը եւ երէկուայ մեր Եղեռնը կը բաւեն գիտակցելու, որ հայը կուսակցականանալու նաեւ իրաւունք չունի:

**- Հայրենիք:**

Հայրենիք - սկիզբն ու վախճանն է մեր մտածումի, ապրումի եւ գործի: Երբ մեր շրթունքները մըմնջում են ցեղի մասին, մեր աջը ցոյց է տալիս Հայաստանը: Մենք հաւատում ենք Հայաստանին - դա նշանակում է, որ կեանքում սրբազնագոյնը մեզ համար Հայրենիքն է: Մենք շնչում, ապրում ենք Հայաստանով, միշտ պատրաստ տառապելու, գործելու եւ մեռնելու նրա համար: Դա՛ է արժէքների արժէքը մեզ համար: Դա՛ է մեր սրբազան ցաւը, կարօտը, ուրախութիւնը, մեր գոյութեան իմաստն ու իրաւունքը, մեր անմահութիւնը՝ միաժամանակ:

Ազատութիւն - այո՛, երբ հայրենի<օրէն> եւ ազատօրէն գործելու եւ կատարելագործուելու կարելիութիւն կայ:

Իրաւունք - միայն սեփական հայրենիքում, ուր արդար իրաւունք մեզ տալիս է մեր՝ դէպի նմանները ունեցած պարտականութեանց անթերի կատարումը:

Երջանկութիւն - հայրենագուրկներիս համար՝ Հայաստանից դուրս խաբուսիկ են բոլոր տեսակի երջանկութիւնները: Երջանկութիւն - մեր ժողովրդի ճակատագիրը բարւօքելու համար թափուած, մեր աշխատանքով սրբագործուած ուրախութեան գնով:

Չկայ՝ կեանքն ազգին եւ հայրենիքին պատարագելու չափ մեծ երջանկութիւն չկայ՝ աշխարհում:

Հայրենատիրութիւն - ահա՛ վերանորոգչականի մեր դաւանանքը, որի իրականացումը պիտի ուշանայ այնքան, որքան ուշացաւ մեր ժողովրդի վերանորոգումը:

**- Երիտասարդ սերունդ:**

Ճակատագրական է ամէն մի նոր սերունդ: Աւելի քան այդպիսին է օրուայ մեր երիտասարդ սերունդը: Իր ձեռքում է գտնուում ցեղի եւ հայրենիքի ճակատագիրը. Հայաստանը կը լինի կամ չի լինի, եւ դա կախուած է իրենից: Նրանից է կախուած - թագաւոր թէ թափառական ժողովրդի վերածել հայութիւնը: Ա՛յո, միայն ա՛յո գիտակցութեամբ ապրող սերունդը



կարող է ծառայել իր ցեղի յաւիտենականին: Կործանարար ու դժբախտ է անհաւատ սերունդը - նա՛, որի համար տիեզերքը անհոգի նիւթ եւ շարժում է միայն: Հաւասարապէս դժբախտ եւ արգահատելի է այն սերունդը, որ բաւարարում է օտարութեան հացով: Մեր նորահասը պիտի իւրացնէ հայ վերանորոգչականի դաւանանքը - Աստուած, ցեղ, հայրենիք, որպէսզի իր ժողովրդի անցեալը, ներկան եւ ապագան կապակցաբար, ստեղծագործօրէն ապրել կարողանայ: Նա իր ամբողջ հասակով պիտի նետուի հրապարակ՝ սատարելու հայոց վերանորոգումին, եթէ չի ուզում ապրել, տառապել եւ մեռնել անհայրենիք:

### **- Ընտրանի:**

«Երկրի աղը» - արդա՛ր որակում:

Ոգու ծնունդ՝ դա՛ է ապրեցնում մարդկային ոգին: Կրո՛ղը սրբութեան, հերոսականի եւ հոգեւոր գեղեցկութեան զգացումների: Նրա շնորհիւ են զարգանում կրօն, արուեստներ, իմաստասիրութիւն: Նա՛ է կապը յաւիտենականի եւ առօրեայի միջեւ: Ճշմարիտ առաջնորդ, առանց որին ոչինչ են իշխանութիւնն ու իշխանաւորը:

Նրանն է կոչումներից ամենասրբազանը, պատասխանատուութիւններից ամենամեծը: Ազգերը մի հատիկ ճշմարիտ ազնուականութիւն ունին - դա էլ ընտրանին է: Նրա միջոցաւ են բարձրանում եւ նրա հետ են ընկնում ազգերը: Հասարակութեան մէջ շատերը կարող են մեղանչել օրէնքի, բարոյականի, հաւաքական շահերի դէմ, բայց այդ մեղանչումներից չի՛ խախտուի հանրային բարոյականը, չի՛ անբարոյականանայ հասարակութիւնը: Սակայն, բաւական է, որ ընտրանիին պատկանող մէկը կոպտօրէն մեղանչեց իր կոչումի դէմ - այլեւս քանդուած համարէք ժողովրդի հաւատքը, համարումը, բարոյականը: Ընտրանին իր կեանքի կենդանի օրինակներով է վարում ժողովուրդը:

Կրօնապէս պա՞ղ է եկեղեցականը՝ հակակրօն է ժողովուրդը:

Հոգեպէս էսնա՞ֆ է ուսուցիչը, այլեւս կարիք չկայ՝ աւելի մեծ դժբախտութիւն բաղձալ նրա ազգին: Յաւիտենականի շունչից՝ զո՞ւրկ է գրողը՝ նա անխուսափելիօրէն պիտի դառնայ ստորնութեան քարոզիչը:

Պարտողակա՞ն է զինուորը՝ այլեւս նա հեռացած է իր սրբազան առարկայից - հայրենիքից, եւ վաղն իր ուրացումը կարող է դաւաճանութեան հասցնել:

Շահասէ՞ր է ազգային գործիչը՝ նուազ ազգասիրութիւն ու նուիրում փնտռէ՞ք ազգի լայն խաւերի մէջ:

Այսպէ՛ս է ընտրանին - նա գործում է իր կեանքի օրինակներով:

Եկեղեցական, ուսուցիչ, գրող, գիտնական, զօրական, գործիչ - ահա՛

ընտրանին: Սրանց կոչումը հրամայողաբար պահանջում է ամբողջական եւ ներոյժ կեանք:

Օրգանապէս ապաքաղաքական է ընտրանին, որով՝ բացարձակապէս անկուսակցական պիտի լինի դա:

Շեղումն՝ իր կոչումէն - ժողովրդի անկումը դառնում է անխուսափելի:

**- Ազգային բարոյական:**

Դա է անհրաժեշտ հիմքը ազգի հոգեւոր կառոյցի, եւ դրանում է կայանում ազգի իրական ոյժը: Կա՞յ այդ բարոյականը - կայ ազգը. պակասո՞ւմ է դա - նուազում է կարեւորութիւնը բնական գործօնների - ցեղի, հայրենի հողի, ինչպէս եւ ազգութիւն ստեղծող այլ կարգի ստորոգեալների: Մեր վերաբերմունքը դէպի մեր կենսաբանական արարիչ ցեղը՝ սրանում փնտռէ՞ք ազգային բարոյականի արմատը: Ցեղն է ազգի գերագոյն օրէնսգիրը բարոյական բնագաւառում: Ազգային բարոյականը ենթադրում է մի օրինակարգ եւ հանրապարտադիր ընթացք, որից ամէն շեղում համարում է հոգեւոր մահափորձ ազգի դէմ: Իսկ ընթացքը - ըստ վաղեմագոյն մի իմաստասերի - դա այն է աշխարհի համար, ինչ որ է գետանցքը՝ գետի համար: Արդեօք, այսօր խախտուած չէ՞ զաղութահայու ազգային բարոյականը: Այդ հարցին պատասխանելու համար, պէտք է ճշդել, թէ իրենից ի՞նչ է ներկայացնում օրուայ հայն իբրեւ միտք, զգացում եւ կամք: Աւելի պարզ՝ պէտք է ճշդել, թէ այսօր ինչպիսի՞ զգացումներ են տիրապետում նրա հոգում: Այդ իմաստով բարոյահասարակագիտական մի վերլուծում տրտմութեամբ պիտի համակէ ձեզ: Ի՞նչ էինք երէկ: Այդ մասին թող խօսի ինքը՝ դարերի հայը. «Մի տնից չէինք, բայց մի ձէնով էինք»: Ցեղօրէն բարոյական էր հայը. «Մէջք մէջքի տանք՝ սարեր շուռ տանք»: Սոցիալապէս առողջ էր նա. «Չացն Աստծուց, ես էլ հետը, ո՛վ հասնի՝ թող ուտի»: Սոցիալապէս արդար էր. «Այն մարդը, որ Աստուած ունի՝ աղքատ չէ»: Իդէալիստ էր նա. «Չող ու մոխիր կե՛ր, տմարդէն հաց մի՛ մուրար»... Ցեղօրէն հպարտ էր. «Չայը չյոգնի՝ չի՛ նստի»: Ծուլութեան հացը չսիրող է. «Ոտքդ քարին զարնուի՝ խղճմտանքդ քննէ»: Բարոյապէս զգայուն էր. «Իր ծառը ծարաւ թողած ուրիշինը ջրողը ո՛չ յարութիւն ունի, ո՛չ էլ թողութիւն»: Ազգայնօրէն զգաստ էր. «Առիւծը կատուին խեղդել չեմ տայ»: Տղամարդ էր հայը:

Այս էինք երէկ - որակի՛ ազգ:

Մէջբերածս՝ հայկական առածների այդ փոքրիկ ծաղկաքաղը - որի մէջ մեր ժողովուրդը դրած է դարերի իր բարոյա-ազգային փիլիսոփայութիւնը - կը բաւէ հաստատելու, որ ստրկութեան մէջ, օտար լուծերի տակ անգամ մենք եղել ենք ազգային բարոյականով զօրաւոր ժողովուրդ: Եւ հենց

դրանում չէ՞ գաղտնիքը, որ մենք կանք ու կը մնանք, իսկ մեզ հասակակից շատ ազգերից մնացել է քարե յիշատակ միայն: Ապա ուրեմն՝ եթե մեր սերունդները մտածեին, ապրեին եւ գործեին օրուայ հայու նման՝ այսօր հայութիւնից արեւի տակ մնացած կը լինէր մի սեղմ տապանագիր միայն: Տեսանք, թէ ինչ էինք երէկ, զգում ենք, թէ ինչ չենք այսօր, եւ գիտենք, թէ ինչ պիտի դառնանք վաղը՝ իբրեւ ազգ չկորչելու համար:

Ազգային բարոյականի տեսակետից՝ մի Գիւլբենկեան աւելի չարժէ, քան Ղայաստանի մի գեղջուկ, եւ մի զօրավար, մի ուսուցչապետ, քան՝ մի համեստ արհեստաւոր, էականը յաւիտենական հայկականութիւնն է, որ ազգութիւնը նուիրագործում է իր ամէն մի անդամի մէջ:

Ազգային բարոյականը - ամէն բանից առաջ - պայմանաւորում է մի ժողովրդի ստեղծագործ համերաշխութեամբ: Դրսեցի թէ տեղացի, իմաստասէր թէ անգրագէտ, չէզոք թէ կուսակցական - հայ մարդիկ են սրանք, որոնց հանդէպ տածածդ պաղութիւնը կայէնութեան է համազօր: Ներազգային կեանքում սպանում է ո՛չ միայն սուրը, թոյնը, այլեւ՝ անտարբերութիւնը: Ճակատագրի եղբայր է ամէն հայ: Աւելին՝ ամէն հայ՝ դա դո՛ւ ես - ահա՛ ազգային բարոյականի անխախտելի օրէնքը: Այդ օրէնքի դէմ մեղանշողը քանդում է իր ազգութեան հիմերը, դա թշնամին է իր ազգի: Որակի՛ ազգ էինք երէկ: Չաղէտուելու եւ չկորչելու համար՝ վերստին պիտի դառնանք այդպիսին՝ հրամայողաբար: Անվերջ որակաւորուելու, ազգ դառնալու պրոցեսի մէջ են բոլոր ժողովուրդները: Իբրեւ ոգու ժողովուրդ՝ մեզ համար աւելի հեշտ է որակաւորուել: Աշխատենք դառնալ «թանկարժէք քար», որպէսզի «ծանր կշռենք եւ շատ արժենք»: Դա՛ է պահանջում մեզանից ազգային բարոյականը, մասնաւորապէս մեր բնաշխարհից դուրս:

**«Խօսակցութիւն մը զօր. Գ. Նժդեհի հետ»**

*«Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174*

## **ԹՈՒՐՔԻԱ. ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ Ռուբեն Մելքոնյան**

### **Էթնիկ ծագման խնդիրը Թուրքիայի մեջլիսի օրակարգում**

Թուրքիայում էթնիկ ինքնության խնդիրը կարելու դեր ունի ոչ միայն հասարակական քննարկումներում, այլև աստիճանաբար ավելի շատ է ընդգրկվում քաղաքական օրակարգում: 2010 թվականի հուլիսին Թուրքիայի Ազգային մեծ ժողովում քրդական ընդդիմադիր Խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցությունը հանդես եկավ մի առաջարկությամբ, որը բուռն կրքեր առաջացրեց թուրքական քաղաքական դաշտում: Քուրդ պատգամավորներն առաջարկեցին, որ Թուրքիայում անցկացվի բացահայտ «էթնիկ մարդահամար», որպեսզի պարզվի, թե իրականում ինչպիսին է երկրի էթնիկ պատկերը: Նույն առաջարկով դեռեւս 2009թ. հանդես էր եկել քրդական կուսակցության պատգամավոր Յասիփ Քափլանը, որի առաջարկի համաձայն՝ արդեն 2011 թվականի վերջին Թուրքիայում պետք է անցկացվեր մարդահամար էթնիկ ծագման հիման վրա:

Քրդական կուսակցության այդ առաջարկը խստորեն քննադատվեց ինչպես իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցության, այնպես էլ ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական եւ Ազգայնական շարժում կուսակցությունների կողմից: Խորհրդարանական քննարկումներն այն աստիճան թեժացան, որ պատգամավորների միջեւ անգամ տեղի ունեցան քաշքշուկներ եւ ձեռնամարտեր: Առաջարկության հեղինակներին մեղադրեցին ռասիզմի մեջ, որին ի պատասխան Խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցության պատգամավոր Սըրըր Սաքըքը հետեւյալ մեկնաբանությունն արեց. *«Այս առաջարկության մեջ ռասիզմի կամ անջատողականության հետք անգամ չէք կարող գտնել: Ուղղակի մեր ասածը հետեւյալն է. այս երկրում տարբեր ժողովուրդներ են ապրում, արդյոք մենք իրավունք չունեն՞ք իմանալ, թե ինչքան հայ, ինչքան հույն, ինչքան ասորի, ինչքան քուրդ կա, եւ այս մասին իմանալու ցանկությունը երբեք ռասիզմ չի կարող համարվել: Մի՞թե իշխանությունները չեն ասում, որ մեր տարբերությունը նաեւ մեր*

*հարստությունն է»:* Իսկ ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավոր Թայֆուն Իչլին կարծում է, որ անհնար է նման հետազոտություն անել եւ բերում է հետեւյալ հիմնավորումը. *«Ինչպե՞ս եք տարբերակելու, ի՞նչ է, արյան անալիզ եք անելու: Այս երկրում հազարավոր մարդիկ կան, որոնց ծնողներից մեկը թուրք է, մեկը քուրդ, նրանց որպես ի՞նչ եք հաշվարկելու: Էթնիկ ծագման հիմքի վրա քաղաքականություն անելը հակասում է մարդու իրավունքներին եւ ժողովրդավարությանը»:*

Բուռն քննարկումների ժամանակ տեսակետ էր հնչում, որ նման հետազոտություն հնարավոր չէ կատարել նաեւ տեխնիկական առումով, քանի որ պարզ չէ, թե ինչն են ընդունելու որպես էթնիկ ծագման հիմք՝ գանգի չափը, արյունը, գենը: Առաջարկի հակառակորդները նշում էին, որ Թուրքիայում տարբեր ժողովուրդներ միախառնվել են նաեւ խառնամուսուկներին հետեւանքով եւ *«դրա համար շատ երջանիկ են»:* Քննարկումների ընթացքում անընդհատ խոսվում էր Թուրքիայի հասարակության խառնածին բնույթի մասին. թուրքական «Փոստա» թերթի հեղինակներից Ջանդաշ Թուլգա Ըշըքը մի հետաքրքիր դիտարկում արեց, համաձայն որի՝ էթնիկ ծագման հիման վրա մարդահամար անցկացնելը դժվար է ոչ միայն պետության, այլեւ Թուրքիայի բնակչության մի ստվար զանգվածի համար եւս, քանի որ խառնածին մարդկանց շատ բարդ է հստակ պատասխան տալ իրենց էթնիկ ծագման մասին հարցին:

Ի վերջո, այս բուռն արձագանքներից հետո թուրքական խորհրդարանն օրակարգում չընդունեց հիշյալ առաջարկը, սակայն հանրային քննարկումները չդադարեցին եւ ունեն շարունակվելու միտում: Անշուշտ, ազգությամբ քուրդ պատգամավորների առաջարկի հիմնական դրդապատճառը Թուրքիայում քրդերի իրական թվաքանակի պաշտոնականացումն է եւ դրան քաղաքական հնչերանգ հաղորդելը: Գաղտնիք չէ, որ Թուրքիայում թուրք-քրդական պայքարն ունի մի քանի կողմ, որոնցից մեկն էլ դեմոգրաֆիկ պատերազմն է: Տվյալները ցույց են տալիս, որ հիմնականում գավառաբնակ եւ գյուղաբնակ քրդերի շրջանում բարձր է ծնելիության մակարդակը, եւ կարծիքներ են հնչում, որ աճի այս տեմպերի պարագայում արդեն 2025թ. քրդերը կարող են թվային առումով հավասարվել թուրքերին, իսկ 2050թ. գերազանցելու են նրանց՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով:

## «Ծպտյալ հայերի վերագարթոնքը»

Թուրքիայում բնակվող ծպտյալ եւ իսլամացված հայերի շրջանում ներկայումս տեղի ունեցող վերագարթոնքի գործընթացն առաջացրել է տարբեր գիտական շրջանակների, այդ թվում եւ արեւմտյան ուսումնասիրողների հետաքրքրությունը: Արդեն տեւական ժամանակ է, ինչ գերմանական, ամերիկյան, ֆրանսիական մի շարք հետազոտողներ, լրագրողներ զբաղվում են այդ խնդրով: Հարկ է նկատել նաեւ, որ նրանց ուսումնասիրությունները, մեծ մասամբ, անհասանելի են հայկական գիտավերլուծական շրջանակներին: Ստորեւ, հայերեն թարգմանությամբ եւ որոշ կրճատումներով, ներկայացնում ենք ֆրանսիական Le Nouvel Observateur ամսագրում **Լորա Մարշանի** հրապարակած **«Թուրքիա. ծպտյալ հայերի վերագարթոնքը»** հետաքրքրական հոդվածը:

*Նրանց անվանում են «կրոնափոխներ»: Փողոցում նրանք թուրք եւ մուսուլման են, իսկ սրտերում՝ հայ եւ քրիստոնյա: Սակայն հետզհետե այդ մեծաքանակ հայերը բացահայտվում են. ովքե՞ր են նրանք իրականում...*

«Աստված, շնորհակալ ենք քեզ այս կերակուրի համար եւ խնդրում ենք օրհնես այն,- *հանդիսավոր կերպով կարդում է հայերեն աղոթքը Մուրադը՝ ընտանիքի ղեկավարը,-* Հանում Հոր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամեն»: *Նրա երեխաները, կինը, տատը, ում գլխին կա սպիտակ քող, որոնք կրում են քուրդ գեղջկուհիները, խաչակնքում են եւ սկսում ծաշել: Այս արարողությունը տեղի է ունենում գիշերը, բնակարանում, երբ դուռն ապահով կողպված է, որպեսզի հարեւանները չլսեն: Հաջորդ օրը Մուրադը գնում է աշխատանքի. «Խանութում ես գրանցված եմ որպես Ռամադան,- բացատրում է նա,- այստեղ բոլորը պահպանողական մուսուլմաններ են: Քրիստոնյա լինելը լավ չէ բիզնեսի համար, քանի որ ոչ ոք առեւտուր չի անի գյավուրից»: Մեր այն հարցին՝ հիմա նա քրիստոնյա՞ է, թե՞ մուսուլման, թե՞ երկուսը միասին, նա ժպտալով պատասխանում է. «Իմ ինքնությունը իմ սրտում է, միայն Աստված գիտի այդ մասին: Իմ սրտում կա Քրիստոս»:* *Նրա սրտում կա նաեւ հատկապես Ցեղասպանությունը, որից տուժել են հայերն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, ինչպես նաեւ իր ընտանիքի ողբերգությունը, որի մասին շշուկով պատմել են սերնդեսերունդ. օսմանյան զինվորների պարտադրանքով նրա այն ժամանակ դեռահաս պապը խեղդել է իր փոքր եղբորը Եփրատ գետում:*

*Պաշտոնապես Թուրքիայում մնացել է փոքրիկ հայկական համայնք, որի թիվը հասնում է 65 հազարի. նրանք ողջ են մնացել «էթնիկական*

գտումներից» հետո, որոնց ընթացքում գոհվել է ավելի քան 1 միլիոն մարդ: 1915թ. երիտթուրքերի կառավարության, իսկ ավելի վաղ՝ 19-րդ դարի վերջերին, սուլթան Աբդուլ Չամիդի կողմից ծրագրված կոտորածից փրկվելու համար տասնյակ հազարավոր հայեր ընդունել են իսլամ: Նրանց անվանում են «դյոնմե» (կրոնափոխ): Տասնամյակների ընթացքում նրանք մնացել են ընդհատակում, որպեսզի փրկվեն թուրքական պետության քաղաքականությունից, որը ցանկանում է ոչնչացնել հայկական ներկայության բոլոր հետքերը Անատոլիայից: Սակայն ներկայիս ժողովրդավարացման գործընթացը թուրքիայում սկսում է կոտրել Ցեղասպանության թեմայի տաբուն, եւ ծպտյալ հայերը՝ թուրքիայի պատմության ամենամռայլ էջի լուռ վկաները, զգուշությամբ բացահայտում են իրենց ծագումը:

Ուսանողուհի Դամլան, ինչպես բոլոր կրոնափոխները, ունի թուրքական անուն, որպեսզի աննկատ մնա: «Ես միշտ գիտեի, որ հայուհի եմ, բայց երբ ես փոքր էի, իմ ծնողները պնդում էին, թե պետք չէ այդ մասին խոսել»,- հիշում է նա: Լինելով հոգեւորականի ծոռնուհի՝ նա իր հերթին հետեւում է բազմաթիվ քրիստոնեական սովորույթների. «Սուրբ Ծննդին մենք պատրաստում են հատուկ խմորեղեն, որի մեջ դնում ենք չամիչ: Սուրբ Ջատկին մենք գունավոր թելերը թրջում են օրհնված ջրում, որպեսզի պատրաստենք թեւնոցներ, իսկ երբ որեւէ մեկը հիվանդ է, ես եկեղեցում մոմ են վառում նրա համար...»:

Ծպտյալ հայերը յուրացրել են սինկրետիզմի արվեստը: Պսակադրության արարողությունն իրականացվում է մզկիթում, սակայն «դյոնմեների» միջեւ, որպեսզի պահպանեն ինքնությունը: Սակայն սոցիալական ճնշումից խուսափելու համար կրոնափոխների որոշ մասն ամբողջությամբ ձուլվել է, ինչն անխուսափելի է: «Ես ունեմ մի ազգական, որը մզկիթի իմամ է, իսկ մեկ ուրիշը՝ ծայրահեղ իսլամիստ»,- ասում է հայազգի Սադրթ Բաբրըջըօղլուն: Դաժան եւ նենգ ժամանակը եղել է ժխտման քաղաքականության լավագույն դաշնակիցը:

Չնայած պաշտոնական գաղափարախոսությանը, թուրքական որոշ հետազոտողներ սկսել են վեր հանել հայերին, որոնք «թաքնված են պատմության մութ անկյուններում»: «Սկզբում օսմանյան իշխանություններն աքսորից ազատում էին այն հայերին, որոնք իսլամ էին ընդունում,- բացատրում է Բոսֆորի համալսարանի պրոֆեսոր, պատմաբան Սելիմ Դերինգիլը,- սակայն հետո իսլամի ընդունումն այլևս չէր փրկում հայերին, քանի որ նրանց կրոնափոխությունը համարվում էր ոչ անկեղծ»: Այն հարցին, թե քանի մարդ է փոխել իր կրոնը, որպեսզի փրկվի, Դերինգիլը պատասխանում է. «19-րդ դարում 20 հազարից մինչև 150

հազար...Իսկ 1915-ին անհայտ է...»: Նույնիսկ ցեղասպանությունից հետո այդ երեւոյթը պահպանվել է, եւ դրա արդյունքն այն է, որ ներկայումս Թուրքիայի երակներով հոսում է հայկական արյուն:

Սասունի իր գյուղում Գիյասեթթին Գելիրը հավաքել է ցեղասպանության վերջին վերապրածների հիշողությունները. «Բոլորն ինձ ասում էին, որ այն ժամանակ իրենք մտածել են, թե կրոնափոխությունը կլինի ժամանակավոր, մինչեւ ամեն ինչ կկարգավորվի»:

«Թրից պրծածներ». այդպես են չարամտորեն անվանում ցեղասպանության վերապրողներին, որոնք մնում են պետության սեւեռուն ուշադրության տակ: Ադմինիստրատիվ հարցումների կամ զինվորական ծառայության ժամանակ կրոնափոխները գիտակցում են, որ իրենք վստահելի չեն համարվում: Երիտասարդ ինժեներ Ահմեդն ասում է, որ իր եղբայրն աշխատանքի չի ընդունվել որպես ռազմական օդաչու, «չնայած հաջողությամբ հանձնել էր բոլոր քննությունները զինվորական ակադեմիայում»: Մի երեկո նրա գինովցած հորեղբայրն ասել է նրան. «Դու հայ ես, դրա համար էլ նրանք քեզ գործի չընդունեցին»: Թուրքական ազգայնականության ոգով դաստիարակված երիտասարդը ցնցվում է այդպիսի բացահայտումից: «Յայ լինելը վիրավորանք է: Իմ եղբայրը սկսեց հավատալ, որ ինքը Սուհամեդի ընտրյալն է եւ իր շրջապատն ուղղակի փորձում է իրեն հայ դարձնել»: Յետագայում նա մահանում է հոգեկան խանգարումից՝ շիզոֆրենիայից:

2007թ. հայազգի լրագրող Յրանտ Դինքը սպանվեց 17-ամյա ծայրահեղ ազգայնամուլի կողմից: Նրա հուղարկավորությանը 100 հազար թուրք դուրս եկան փողոց՝ ունենալով պաստառներ, որոնց վրա գրված էր. «Մենք բոլորս հայ ենք»: Ջայրույթի այս բղավոցների հետեւում հավանաբար կար նաեւ կոլեկտիվ ժառանգության գիտակցումը...Թուրքիայում զլխավոր հայկական ծայնի սպանությունից հետո սկսեցին նկարահանվել փաստագրական ֆիլմեր, տեղի ունենալ քննարկումներ, գիտաժողովներ, որոնք կոչ էին անում հաշտության, պատմական ճշմարտության ընդունման, հիշողության առջեւ պարտքի գիտակցման:

Այսպիսի անսպասելի կարեկցանքից ոգեւորվելով՝ կրոնափոխների սերունդները Ստամբուլում դուրս են գալիս ընդհատակից: Դամլան կատարել է իր ընտրությունը, եւ նրա ամուսինը լինելու է իսկական հայ, իսկ նրանց երեխաներն ունենալու են քրիստոնեական անուններ: Իսկ 27-ամյա Յաքիֆեն վերջերս է մկրտվել. «Մենք ունենք տարօրինակ ինքնություն: Մեր տատերը եւ պապերը եղել են հայեր, մեր ծնողները՝ մուսուլմաններ, իսկ մենք դառնում ենք այնպիսին, ինչպիսին մեր տատերն ու պապերն են եղել», - ասում է Յաքիֆեն:



**ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ – 2011.  
ՀԱՎԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ  
ԲԵՆԻՏԱԿԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

Մերձավորարեւելյան տարածաշրջանում 2011թ. հավանական են մի շարք իրադարձություններ, որոնք կարող են էական ազդեցություն թողնել աշխարհաքաղաքական զարգացումների վրա: Վերլուծելով տարածաշրջանում ձեւավորված իրավիճակը՝ ամերիկյան մի շարք առաջատար վերլուծական կենտրոններ՝ Սթրատֆոր, Արտաքին հարաբերությունների խորհուրդ, Բրուքինգս հաստատություն, կատարում են թե՛ տարածաշրջանային բնույթի, թե՛ առանձին պետություններում սպասվող զարգացումների հետ կապված կանխատեսումներ:

Մերձավոր Արեւելքում աշխարհաքաղաքական զարգացումների վրա կարեւոր ազդեցություն կարող է թողնել մինչեւ 2011թ. ավարտը նախատեսված ամերիկյան զորքերի դուրսբերումն Իրաքից: 2010-ը Իրաքում նշանավորվեց երկարատեւ ներքաղաքական ճգնաժամով, երբ մարտին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո ամիսներ շարունակ խորհրդարանական մանդատ ստացած ուժերը չէին կարողանում համաձայնության գալ կոալիցիոն կառավարության ձեւավորման խնդրի շուրջ: Չնայած 2010թ. վերջին Իրաքում ձեւավորվեց ազգային միասնության կառավարություն՝ գործող վարչապետ Նուրի ալ Մալիկիի գլխավորությամբ, տարբեր քաղաքական եւ կրոնական համայնքների, առաջին հերթին շիաների եւ սուննիների միջեւ առկա հակասությունները շարունակում են չլուծված մնալ, ինչը զգալիորեն խոչընդոտելու է նորաստեղծ կառավարության արդյունավետ գործունեությանը:

Ամերիկյան ուժերի դուրսբերումը կարող է նպաստել Իրաքում անկայունության աճին: Լայնածավալ ներքին բախումների հավանականությունը փոքր է, սակայն չեն բացառվում առանձին ընդհարումներ կրոնական տարբեր համայնքների միջեւ: Իրաքի առջեւ ծառայած կարեւոր խնդիրներից են նաեւ Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության՝ կենտրոնական իշխանության հետ ձեւավորված հարաբերությունները: Քրդերի կողմից դե յուրե անկախությանն ուղղված քայլերի իրականացումը կտրուկ կսրի իրավիճակը ոչ միայն Իրաքում, այլեւ ողջ տարածաշրջանում: Անկախ քրդական պետության ստեղծման հավանականությունը լուրջ սպառնալիք է նաեւ Թուրքիայի, Իրանի եւ Սիրիայի

տարածքային ամբողջականությանը: Կենտրոնական իշխանությունների եւ քրդական ինքնավարության միջեւ հարաբերությունների լարվածության պատճառ կարող է դառնալ նաեւ նավթով հարուստ Քիրքուկի պատկանելության խնդիրը: Քրդական ինքնավարության իշխանությունները պնդում են Քիրքուկի՝ ինքնավարության սահմաններում ընդգրկման անհրաժեշտությունը, ինչը լուրջ անհանգստություն է առաջացնում թե՛ պաշտոնական Բաղդադում, թե՛ պաշտոնական Անկարայում: Այնուամենայնիվ, ամերիկյան վերլուծական կենտրոններն ընդհանուր առմամբ Իրաքում իրավիճակի կտրուկ սրում չեն ենթադրում, սակայն ամերիկյան ուժերի դուրսբերումը եւ ամերիկյան ազդեցության նվազումը հիմքեր կարող են ստեղծել հետագայում անկայունության ավելացման համար:

Մերձավոր Արեւելքում հաջորդ կարելուր խնդիրն Իրանի միջուկային ծրագրի շուրջ հնարավոր զարգացումներն են, ԱՄՆ–Իրան հարաբերությունները եւ Իրանի դեմ ռազմական հարվածի հավանականության խնդիրը: 2009թ. Օբամայի վարչակազմի՝ Իրանի հետ ուղղակի բանակցությունների ճանապարհով հարաբերությունների կարգավորման հասնելու քաղաքականությունը փաստացի որեւէ արդյունք չտվեց: Իրանի իշխանությունները մերժեցին 2009թ. հոկտեմբերին ԱԵՄԳ-ի կողմից ներկայացված առաջարկը: ԱՄՆ իշխանություններն իրենց հերթին մերժեցին Բրազիլիայի եւ Թուրքիայի միջնորդությամբ Իրանի հետ ձեռք բերված եռակողմ պայմանավորվածությունները, ինչին հետեւեց 2010թ. հունիսին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից Իրանի դեմ նոր պատժամիջոցների ընդունումը: Միաժամանակ, Իրանի իշխանությունները հայտարարում են միջուկային ծրագրի շարունակման մտադրության մասին՝ շեշտելով, որ պատժամիջոցները չեն կարող խոչընդոտել խաղաղ միջուկային ծրագիր ունենալու Իրանի իրավունքի իրականացմանը: ԱՄՆ–Իրան հարաբերությունների վրա որոշակի ազդեցություն կունենա նաեւ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումը, այն կարող է նպաստել Իրաքում իրանական ազդեցության աճին եւ պաշտոնական Թեհրանին հավելյալ լծակներ տալ ԱՄՆ-ի հետ հնարավոր բանակցություններում: Իրաքում Իրանի ազդեցության աճը եւ տարածաշրջանում ամերիկյան ազդեցության նվազումը կհարկադրի Պարսից ծոցի արաբական պետություններին, առաջին հերթին՝ Սաուդյան Արաբիային, որոշակի փոփոխություններ կատարել արտաքին քաղաքականության մեջ՝ փորձելով հասնել Իրանի հետ հարաբերությունների բարելավմանը:

Սթրատֆոր վերլուծական կենտրոնը գտնում է, որ 2011թ. ԱՄՆ–Իրան հարաբերություններում առավել հավանական է ոչ հրապարակային շփումների շարունակումը՝ Իրաքի հարցում որոշակի փոփոխամածայնու-

թյան գալու նպատակով: Փոխհամաձայնության հիմք կարող է դառնալ Իրաքում ուժերի այնպիսի հավասարակշռության հաստատումը, որն ինչ-որ չափով կբավարարի թե՛ ամերիկյան եւ թե՛ իրանական կողմին: Ամենայն հավանականությամբ, կշարունակվեն նաեւ Իրանի միջուկային ծրագրի շուրջ բանակցությունները, որոնց նոր փուլը մեկնարկել է 2010թ. դեկտեմբերին: Այդ բանակցությունների ընթացքում կտրուկ առաջընթացի արձանագրումը քիչ հավանական է, սակայն դրանք հնարավորություն կտան որոշակիորեն մեղմել առկա լարվածությունը: Արդյունքում՝ 2011թ. Իրանի դեմ ԱՄՆ-ի կողմից ռազմական որեւէ գործողության իրականացումը քիչ հավանական է՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որը 2011թ. ԱՄՆ-ում նախընտրական տարի է, եւ Իրաք ներխուժելու Ջորջ Բուշ կրտսերի որոշումը քննադատող եւ պատերազմն ավարտելու կոչերով իշխանության եկած Օբաման Մերձավոր Արեւելքում նոր պատերազմ չի սկսի:

Կարելի է զարգացումներ են սպասվում նաեւ Թուրքիայում եւ թուրք-ամերիկյան հարաբերություններում: Վերլուծական կենտրոնների կանխատեսումների համաձայն, 2011թ. հունիսին նախատեսված խորհրդարանական ընտրությունների արդյունքում ներքաղաքական կյանքում էական փոփոխությունների հավանականությունը բավականաչափ փոքր է, միաժամանակ չի բացառվում 2002թ. նոյեմբերից երկրում իշխող չափավոր իսլամական Արդարություն եւ զարգացում կուսակցության դիրքերի որոշակի թուլացում: Թուրք-ամերիկյան հարաբերություններում կպահպանվեն 2010թ. արձանագրված միտումները. կողմերը կշարունակեն հայտարարել ռազմավարական համագործակցության շարունակման կարելիության մասին, միաժամանակ մի շարք կարելի հարցերում, առաջին հերթին տարածաշրջանային զարգացումների համատեքստում, Թուրքիան կշարունակի անկախ քաղաքականության իրականացումը, ինչի արտացոլումն էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Իրանի դեմ նոր պատժամիջոցների խնդրով քվեարկության ժամանակ Թուրքիայի պահվածքը: Կպահպանվի նաեւ թուրք-իսրայելական հարաբերություններում առկա լարվածությունը, միաժամանակ կողմերը կշարունակեն երկկողմ շփումներն անվտանգության խնդիրների, ինչպես նաեւ ռազմական համագործակցության ոլորտներում: Թուրքիան կշարունակի նաեւ տարածաշրջանային ակտիվ արտաքին քաղաքականությունը՝ առաջին հերթին փորձելով մեծացնել սեփական ներգրավվածությունն Իրաքում, ինչը հնարավորություն կտա նրան անհրաժեշտության դեպքում միջամտել Իրաքում տեղի ունեցող ներքին գործընթացներին:

Կարելի է զարգացումներ են սպասվում նաեւ Աֆղանստանում: 2010թ.

այդ պետությունում տեղակայված ՆԱՏՕ-ի ուժերը մի շարք հաջողություններ արձանագրեցին թալիբների դեմ պայքարում, հատկապես Աֆղանստան 30.000 ամերիկյան հավելյալ զինվորներ ուղարկելու Օբամայի վարչակազմի որոշումից հետո, սակայն ակնհայտ է, որ Աֆղանստանում տեղակայված զորախումբն ի վիճակի չէ զուտ ռազմական միջոցներով վերջնական հաջողության հասնել: 2010թ. արձանագրված հաջողությունները կարող են հիմք դառնալ Թալիբան շարժման կամ առնվազն նրա առավել չափավոր հատվածի հետ բանակցություններ սկսելու եւ Աֆղանստանում իրավիճակի կտրուկ փոփոխություն արձանագրելու համար: Այս գործընթացում որոշակի դերակատարում կարող է ստանձնել նաեւ Պակիստանը: Այստեղ եւս իրավիճակը բավականաչափ լարված է, եւ իսլամական ծայրահեղականները լուրջ սպառնալիք են իշխանությունների համար: Պակիստանի միջնորդությամբ Աֆղանստանում թալիբների հետ որոշակի համաձայնության ձեռքբերումը կամրապնդի պակիստանյան իշխանությունների դիրքերը երկրի ներսում, ինչպես նաեւ որոշակի ազդեցություն կապահովի Պակիստանի համար Աֆղանստանում՝ հավասարակշռելով աստիճանաբար ընդլայնվող Յնդկաստանի ներգրավվածությունը: Ամերիկյան փորձագետները հավանական են համարում 2011թ. այս ուղղությամբ գաղտնի բանակցությունների իրականացումը. միաժամանակ լուրջ տեղաշարժերի արձանագրման հավանականությունը բավականաչափ փոքր է: Ամենայն հավանականությամբ, կշարունակվի նաեւ Աֆղանստանից թմրանյութերի հսկայական ծավալների արտահանումը՝ չանայած դրա դեմ արդյունավետ պայքար մղելու ԱՄՆ եւ ՆԱՏՕ հայտարարություններին:

2011թ. իսրայելա-պաղեստինյան բանակցություններում վերջնական կարգավորման ձեռքբերման հավանականությունը բավականաչափ փոքր է: Այս հարցում առաջընթացի արձանագրումն Օբամայի վարչակազմի արտաքին քաղաքական կարեւոր առաջնահերթությունների թվում էր: ԱՄՆ ջանքերի շնորհիվ 2009թ. նոյեմբերի 25-ին Իսրայելի կառավարությունը հայտարարեց բացառապես Արեւմտյան ափում բնակարանաշինության տասնամյա սառեցման մասին, ինչը հնարավորություն տվեց 2010թ. աշնանը սկսել իսրայելա-պաղեստինյան ուղղակի բանակցություններ: Սակայն Իսրայելը մերժեց երկարաձգել բնակարանաշինության սառեցման ժամկետը, ինչը պատճառ դարձավ բանակցությունների դադարեցմանը: 2010թ. դեկտեմբերին ամերիկյան կողմը հայտարարեց բնակարանաշինության դադարեցման պայմանի վրա հենված ուղղակի բանակցությունների վերսկսման փորձերից հրաժարվելու մասին: 2011թ. ուղղակի բանակցությունների վերսկսման հավանականությունը պահպանվում է,

սակայն էական առաջընթացի արձանագրումը գրեթե բացառված է: Իսրայելի հիմնական մտահոգություններից մեկը Յիզբալլահի շարժման թուլացումն է: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Յիզբալլահի ուշադրությունը կենտրոնացված է Լիբանանում ընթացող ներքաղաքական գործընթացների վրա, վերջինս դժվար թե լուրջ գործողություններ իրականացնի Իսրայելի դեմ: Ամերիկյան վերլուծաբանների կարծիքով, Իսրայել–Յիզբալլահ լայնածավալ բախումներ 2011թ. չեն արձանագրվի: Գազայի ափը վերահսկող ՅԱՄԱՍ իսլամական շարժումը շահագրգռված է Իսրայելի հետ ժամանակավոր զինադադարի պահպանմամբ, սակայն հաշվի առնելով իսլամական այլ շարժումների հետ մրցակցությունը, ինչպես նաև ՅԱՄԱՍ-ի ազդեցության հետագա ուժեղացումը կանխելու Իսրայելի ջանքերը՝ 2011թ. հնարավոր են ՅԱՄԱՍ-ի եւ իսրայելական ուժերի միջեւ բախումներ, որոնք, սակայն, իրենց ծավալներով զգալիորեն ավելի փոքր կլինեն 2008թ. դեկտեմբեր – 2009թ. հունվար ամիսներին արձանագրված ընդհարումներից:

2011թ. իրադրության որոշակի ապակայունացում է սպասվում նաև Եգիպտոսում՝ կապված 2011թ. սեպտեմբերին նախանշված նախագահական ընտրությունների հետ: Թե՛ իշխող ազգային ժողովրդավարական կուսակցության եւ թե՛ զինված ուժերի վերնախավում չկա միասնական կարծիք 82-ամյա նախագահ Յոսեֆ Մուբարաքի հնարավոր ժառանգորդի հարցում: Նախագահը դեռևս չի հայտարարել վեցերորդ անգամ անընդմեջ նախագահական ընտրություններին մասնակցելու մտադրության մասին: Սակայն անկախ Մուբարաքի որոշումից, ակնհայտ է, որ եթե ոչ 2011թ., ապա մոտ ապագայում Եգիպտոսը կանգնած է իշխանության փոխանցման խնդրի առջև: Մինչ պետական համակարգի ներսում ազդեցիկ դիրքեր ունեցող խմբավորումները փորձում են համաձայնության հասնել իշխանության փոխանցման հնարավոր տարբերակների շուրջ, որոշ քաղաքական, ինչպես նաև զինվորական շրջանակներ կփորձեն օգտագործել անցումային այս շրջանը սեփական դիրքերի ամրապնդման նպատակով:

Ամփոփելով կարելի է նշել, որ 2011թ. Մերձավոր Արեւելքում սպասվում են մի շարք կարեւոր իրադարձություններ, սակայն վերլուծաբանների մեծ մասը գրեթե բացառում է կտրուկ փոփոխությունների արձանագրումը:

**ԹՈՒՐՔԻԱՆ 2011-ԻՆ.  
ՀԵՌԱՆԿԱՐԻ ՈՒՐՎԱԳԾԵՐ  
Հայկ Գաբրիելյան**

**Ներքին քաղաքականություն**

2011 թվականին Թուրքիայում սպասվող իրադարձությունների մասին խոսելիս՝ պետք է առաջին հերթին հիշատակել հունիսի 12-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունները: Ակնկալվում է, որ ընտրություններում դարձյալ հաղթանակ կտանի վարչապետ Էրդողանի գլխավորած Արդարություն եւ զարգացում կուսակցությունը (ԱԶԿ): Այս մասին են վկայում նաեւ 2010 թվականի դեկտեմբերին թուրքական «Metropol» ռազմավարական եւ սոցիալական հետազոտությունների կենտրոնի անցկացրած հարցախույզի արդյունքները: Թուրքիայի 31 նահանգներում անցկացված հարցախույզին մասնակցել է 1504 մարդ, որոնք պատասխանել են «Եթե այժմ խորհրդարանական ընտրություններ լինեին, ո՞ր կուսակցության օգտին կտայիք ձեր քվեն» հարցին: Մասնակիցների 37,7%-ը նշել է ԱԶԿ-ն, 25,5%-ը՝ Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը (ԺՀԿ), 11,5 %-ը՝ Ազգայնական շարժում կուսակցությունը (ԱՇԿ), 5,4%-ը՝ քրդական Խաղաղություն եւ Ժողովրդավարություն կուսակցությունը (ԽԺԿ):

Քաղաքական կուսակցությունների նախապատվելի առաջնորդի հարցում մասնակիցների 40,6%-ը նշել է Էրդողանին (ԱԶԿ), 22,5%-ը՝ Քենալ Քըլըչդարողլուն (ԺՀԿ), 8,6%-ը՝ Դեւլեթ Բահչելիին (ԱՇԿ), իսկ ԽԺԿ ղեկավար Սելահաթթին Դեմիրթաշի օգտին է արտահայտվել ընդամենը 0,9%-ը:

2011 թվականի հունվարի 12-ին Քաղիր Հաս համալսարանի սոցիալ-քաղաքական հետազոտությունների կենտրոնն իր հերթին հարցախույզ անցկացրեց Թուրքիայի 26 նահանգներում, որին մասնակցեց 1000 մարդ: Նրանցից 65,2%-ի կարծիքով՝ ԺՀԿ առաջնորդ Քենալ Քըլըչդարողլուն ի վիճակի չէ ղեկավարելու երկիրը: Էլ ավելի վատ է դրությունը մյուս հիմնական ընդդիմադիր ուժի՝ ԱՇԿ-ի հարցում, որն, ամենայն հավանականությամբ, ընտրությունների ժամանակ թուրքական խորհրդարանում գոյատևելու պայքար է մղելու. 85,6%-ը չի հավատում, որ նրա առաջնորդ Դեւլեթ Բահչելին ընդունակ է ղեկավարելու երկիրը:

Այս ամենը խոսում է այն մասին, որ ԱԶԿ-ն, հանձին Էրդողանի, ունի խարիզմատիկ առաջնորդ, ինչը չի կարելի ասել ԱՇԿ-ի եւ նրա առաջնորդ Բահչելիի մասին: Ինչ վերաբերում է ԺՀԿ առաջնորդ Քըլըչդարոլլուին, ապա նրան նույնպես դեռ չի հաջողվել իրեն ներկայացնել որպես համազգային առաջնորդ, քանի որ նա ցայժմ հիմնականում զբաղված էր ներկուսակցական զգվռտոցներով եւ Էրդողանին շարունակաբար քննադատելով:

Հարկ է նշել, որ խորհրդարանական ընտրություններից առաջ Թուրքիայում լայնորեն շահարկվելու են հայկական եւ հատկապես քրդական խաղաթղթերը: Քանի որ Թուրքիայի հայ համայնքը փոքր է, ուստի եւ Էրդողանը չի պլանավորել շահել նրա աջակցությունը: Ընդհակառակը, վերջին շրջանում հակահայկական քայլերով Էրդողանը փորձում է իր կողմը գրավել թուրքական ազգայնական ընտրազանգվածը: Դրա վառ օրինակը Կարսում գտնվող եւ հայ-թուրքական բարեկամությունը խորհրդանշող անավարտ հուշարձանն «անճոռնի» եւ «ապամոնտաժման ենթակա» պիտակավորելն է:

Այս ամենը ցույց է տալիս, որ Էրդողանն առաջնորդվում է ժամանակի պահանջով: 2010 թվականի նոյեմբերի 9-ին Եվրահանձնաժողովի (ԵՀ) հրապարակած ԵՄ-ի ընդլայնման մասին տարեկան զեկույցի հրապարակումից առաջ Թուրքիայում գրանցվեցին մի շարք «քրիստոնեական ռեկորդներ». բազմամյա ընդմիջումներից հետո առաջին անգամ պատարագներ անցկացվեցին Տրապիզոնի Սյումելա վանքում (88-ամյա ընդմիջումից հետո, օգոստոսի 15-ին), Աղթամարի Սուրբ Խաչ (95-ամյա ընդմիջումից հետո, սեպտեմբերի 19-ին) եւ Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցիներում (32-ամյա ընդմիջումից հետո, հոկտեմբերի 25-ին): Այս ամենը ԵՄ-ին ի ցույց էր դնելու թուրքական իշխանությունների հանդուրժողականությունը երկրում բնակվող քրիստոնյաների նկատմամբ եւ նպաստելու էր ԵՀ զեկույցում Թուրքիային առնչվող բարենպաստ կետերի ներառմանը:

Քրդական հարցում իրավիճակը շատ ավելի խճճված է. ի տարբերություն Թուրքիայում բնակվող հայերի, քրդերն ի վիճակի են խառնելու Էրդողանի խաղաթղթերը: Հիշեցնենք, որ 2007 թվականի հուլիսի ընտրություններին քրդերը հանդես եկան ոչ թե միացյալ կուսակցությամբ, ինչպես 2002 թվականին, այլ՝ առանձին թեկնածուներով: Դա հանգեցրեց նրան, որ Թուրքիայի արեւելյան ու հարավարեւելյան նահանգներում, ուր գլխավորապես ապրում են քրդեր, նրանք հասան նշանակալից հաջողության. խորհրդարանում քրդերը ստացան 21 տեղ:

Այս տարի էլ քրդերը մտադիր են հանդես գալ առանձին թեկնածուներով, ընդլայնել իրենց ներկայացվածությունը խորհրդարանում եւ էական ազդեցություն ունենալ տարբեր օրինագծերի մշակման ու հաստատման գործում:

Ներկայումս Երդողանի գերխնդիրն է համարվում երկիրն առանց լուրջ ցնցումների դեպի խորհրդարանական ընտրություններ առաջնորդելը, քանի որ հակառակ դեպքում նրա եւ ԱԶԿ-ի վարկանիշն անկում կապրի:

Մասնավորապես, Թուրքիայի ներքաղաքական իրավիճակն ապակայունացնելու հնարավորություն ունի Քրդստանի աշխատավորական կուսակցությունը (PKK): Սակայն 2010 թվականի հոկտեմբերի 13-ին Երդողանին հաջողվեց Իմրալը կղզում ցմահ բանտարկություն կրող քուրդ առաջնորդ Աբդուլա Օջալանի օգնությամբ PKK-ի հետ զինադադար հաստատել մինչեւ խորհրդարանական ընտրությունները, ինչը շատ կարեւոր էր իշխող կուսակցության համար: Թուրքական լրատվամիջոցները նշում են, որ Երդողանը զինադադարի հաստատման համար ընդունել է Օջալանի մի շարք պահանջները, ինչից հետո Օջալանը քուրդ զինյալներին հրահանգել է հեռանալ Հյուսիսային Իրաք:

Զինադադարի կապակցությամբ Օջալանը նշել է. «Արդեն 8 տարի է, ինչ ես շանս եմ տալիս Երդողանի կուսակցությանը: Սա արդեն 5-րդ ընտրությունն է: Ամեն անգամ գալիս են ինձ մոտ եւ ասում. «Թող այս ընտրություններն էլ անցնեն» կամ «Սպասիր հաջորդ ընտրություններին»: Այժմ ինձ դարձյալ ասում են. «Սպասիր հաջորդ ընտրություններին»: Սա Երդողանի վերջին հնարավորությունն է»: Փաստորեն, իր այս հայտարարությամբ Օջալանը հաստատեց, որ Երդողանը շարունակ իր հետ բանակցություններ է վարել եւ վարում: Սակայն Երդողանը ցայժմ պաշտոնապես չի հաստատել դա:

Ինչ վերաբերում է այս հարցում թուրքական հասարակության դիրքորոշմանը, ապա այն շարունակում է երկրի թիվ մեկ ներքին խնդրի դերում դիտարկել քրդական հարցը: «Metropol»-ի վերոնշյալ հարցախույզի ժամանակ մասնակիցների 53%-ի կարծիքով՝ Թուրքիան այժմ կանգնած է մասնատման վտանգի առջեւ, 52,1%-ի կարծիքով՝ քրդերին կհաջողվի ի վերջո ստեղծել առանձին պետություն, 59,9%-ը երկրի անվտանգության ամենամեծ ներքին սպառնալիք է անվանել PKK-ն, 64,5%-ը դեմ է Օջալանի հետ բանակցային գործընթաց ձեռնարկելուն, 88%-ն էլ կարծում է, որ ԽԺԿ-ն կապեր է պահպանում PKK-ի հետ:

2010 թվականի դեկտեմբերի վերջին անգլիական «The Economist» պարբերականի խմբագիր Ջոն Փիթն իր վերլուծական հոդվածում կան-



խատեսել է, որ խորհրդարանական ընտրություններից հետո Էրդողանը նախաձեռնելու է նոր Սահմանադրության ընդունումը, որը կփոխարինի 1982 թվականի նոյեմբերի 7-ին ընդունված Սահմանադրությանը:

Փիթի կանխատեսմամբ՝ 2011 թվականին Թուրքիան առավել ազդեցիկ դեր կխաղա, քան նախկինում: Դրան նպաստելու է այն հանգամանքը, որ վերջին երկու տարիների ընթացքում Թուրքիայի տնտեսությունը Եվրոպայի ամենաարագ զարգացող տնտեսությունն է: Կանխատեսվում է, որ 2011 թվականին տնտեսական զարգացման աճի ցուցանիշով Թուրքիան կզիջի միայն Չինաստանին, Հնդկաստանին եւ մի շարք այլ զարգացող երկրների:

### **Տնտեսական ոլորտ**

Թուրք արտահանողները կանխատեսում են, որ 2011 թվականն իրենց համար լինելու է «ոսկե տարի»: Սպասվում է, որ այս տարի թուրքական արտահանումը կաճի 30 տոկոսով:

2010 թվականի հոկտեմբերին Թուրքիայի մշակույթի ու զբոսաշրջության նախարար Էրթուղրուլ Գյունայը հայտնեց, որ իրենց հաշվարկներով՝ 2011 թվականին Թուրքիա կայցելի 30 միլիոն զբոսաշրջիկ, որոնք 25 միլիարդ դոլարի եկամուտ կապահովեն երկրին: Գյունայի խոսքերով՝ իրենք բավարարված չեն դրանով, եւ իրենց նպատակը շարունակում է մնալ 30 միլիարդ դոլարը:

2011 թվականը վճռորոշ է լինելու Nabucco գազատարի համար, որի կառուցման մեկնարկը նախատեսված է հաջորդ տարի: Գերմանական քաղաքագետ, էներգետիկ քաղաքականության գծով փորձագետ Ալեքսանդր Ռարի կարծիքով՝ Թուրքիան այն միակ երկիրն է, առանց որի անհնար է դառնում Ռուսաստանի տարածքը շրջանցող եւ Կենտրոնական Ասիայից դեպի Եվրոպա ձգվող որեւէ խողովակաշարի կառուցումը. «Թուրքիան Nabucco եւ «Հարավային հոսք» գազամուղերի միջեւ պայքարի գլխավոր հաղթողն է: Առաջիկայում Անկարան չի պատրաստվում իրեն սահմանափակել միայն տարանցիկ երկրի կարգավիճակով, ինչպես որ ներկայումս է: Օգտագործելով իր բարենպաստ աշխարհաքաղաքական դիրքը՝ Անկարան վերածվելու է գազը վերավաճառող երկրի: Դա բավականին կամրապնդի Եվրոպայի ու Ասիայի միջեւ Թուրքիայի ունեցած էներգետիկ կամրջի դերը: Սակայն ժամանակը ցույց կտա, թե Եվրոպան որքանով Թուրքիային կթուլատրի ձեռք բերել նմանատիպ կարգավիճակ»:

Ստացվում է, որ Թուրքիան կարող է էներգետիկ շանտաժի ենթարկել իրենից տարանցիկ մեծ կախվածության մեջ գտնվող պաշտոնական Բրյուսելին, ինչը եթե անգամ չապահովի Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին, ապա, թերևս, կարագացնի այն:

### **Արտաքին քաղաքականություն**

Դեկտեմբերի 29-ին Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն, «TRT 1» հեռուստաալիքի եթերում ամփոփելով 2010 թվականին Թուրքիայի արտաքին քաղաքական ոլորտում տեղի ունեցած կարեւոր իրադարձությունները, նշել է, որ 2011 թվականին իրենք նպատակ են դրել Թուրքիան վերածել «խելացի երկրի», ուր պաշտպանված կլինեն խոսքի ու խղճի ազատությունը, մարդու իրավունքները եւ այլն:

Դեկտեմբերի սկզբին Դավութօղլուն «Washington Post» թերթին տված հարցազրույցում նշել էր, որ իր երազանքն «Օսմանյան կայսրության ազգերի միության» ստեղծումն է: Դավութօղլուն դա համեմատել է «Բրիտանական ազգերի համագործակցության» հետ, ինչն էլ հենց հիմք է հանդիսացել նրա երազանքի համար: Դավութօղլուի կարծիքով՝ Թուրքիայի պարագայում գործն ավելի է հեշտանում, քանի որ Օսմանյան կայսրության տարածքները գտնվում էին 3 աշխարհամասերում, մինչդեռ բրիտանական կայսրության դեպքում խոսքը բոլոր բնակելի աշխարհամասերի (կամ մայրցամաքների) մասին է:

Հունվարի կեսին գերմանական «Die Welt» թերթը, անդրադառնալով Էրդողանի արաբական շրջագայությանը, նշեց, որ Էրդողանը երազում է արաբա-թուրքական մեծ պետության մասին. «Էրդողանն արաբական երկրներին կոչ է անում մոռանալ 19-րդ եւ 20-րդ դարերում տեղի ունեցած վեճերն ու տարածայնությունները եւ փոխարենը վերհիշել այն «պատմական ընդհանրությունը», որը միմյանց է կապում թուրքերին ու արաբներին: Էրդողանի խոսքերով՝ այժմ եկել է ժամանակը հիմք դնելու «հազարամյա եղբայրությանը» եւ ստեղծելու «քաղաքական, տնտեսական ու մշակութային միություն», քանի որ թուրքերն ու արաբները «պատկանում» են մեկ քաղաքակրթության եւ «ուներն» ընդհանուր պատմություն:

2010 թվականի դեկտեմբերի 31-ին «Turksam» միջազգային հարաբերությունների ու ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փոխնախագահ Ջելալեթթին Յավուզն իր «2010 թվականի

Թուրքիայի արտաքին քաղաքականության ձեռքբերումներն ու կորուստները» հոդվածում նշում է, որ թեև արտաքին քաղաքականության մի շարք ոլորտներում դրական զարգացումներ են գրանցվել (Սիրիայի, Իրանի, Ռուսաստանի, Չինաստանի հետ հարաբերությունների զարգացում, Մերձավորարևելյան քառյակ՝ Թուրքիա, Սիրիա, Լիբանան, Չորդանան, միություն ստեղծելու հաջող ջանքեր), այնուամենայնիվ, կան նաև ոլորտներ, որոնցում Թուրքիան ֆիասկոյի աստիճանի սխալներ է գործել:

Թուրք վերլուծաբանը որպես օրինակ նշում է, որ Թուրքիա–Իսրայել, Թուրքիա–Իրան, Թուրքիա–ՅԱՄԱՍ հարաբերությունները բացասականորեն են ազդել Թուրքիա–ԱՄՆ եւ Թուրքիա–ԵՄ հարաբերությունների վրա: Դա առավել ընդգծվեց, երբ Թուրքիան ամռանը ՄԱԿ ԱՆ նիստում դեմ քվեարկեց Իրանի դեմ պատժամիջոցների սահմանմանը: Յավուզը Թուրքիայի արտաքին քաղաքականության խոցելի խնդիրների թվում նշել է նաև Հայկական հարցն ու Կիպրական խնդիրը, որոնք նույնպես շաղկապված են Թուրքիա–ԱՄՆ եւ Թուրքիա–ԵՄ հարաբերությունների հետ:

Այդ ամենը թուրքական հասարակությունում հանգեցրել է հակամերիկյան տրամադրությունների զգալի աճի: «Metropol»-ի վերոնշյալ հարցախույզի ժամանակ մասնակիցների 42,6%-ը երկրի անվտանգության թիվ մեկ սպառնալիք է անվանել ԱՄՆ-ը, 23,7%-ը՝ Իսրայելը, 3%-ը՝ Իրանը, 2,3%-ը՝ Հունաստանը, 2,1%-ը՝ Իրաքը, 1,7%-ը՝ Ռուսաստանը: Հայաստանն ստացել է ամենաքիչ քվեները (1%):

Հարցման մասնակիցները պատասխանել են նաև երկրի արտաքին քաղաքականությանն առնչվող մի շարք արդիական հարցերի. 63,6%-ը դեմ է արտահայտվել Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորմանը, 27,9%-ը՝ կողմ, 8,5%-ը դժվարացել է պատասխանել: Հայաստանի սահմանի բացման հետ կապված՝ 50,3%-ը դեմ է արտահայտվել, 27,4%-ը՝ կողմ, իսկ ահա 22,3%-ը դժվարացել է պատասխանել: Իրանի կողմից միջուկային զենք արտադրելուն կողմնակից է 22,7%-ը, այն մտահոգիչ է համարել 68,6%-ը, դժվարացել է պատասխանել 8,6%-ը: ԵՄ-ին անդամակցելուն աջակցում է 53,7%-ը, դեմ է 38,7%-ը, մնացած 7,7%-ը չի կողմնորոշվել այդ հարցում:

Ներկայումս, բացի Եվրոպայի ու Ասիայի միջև էներգետիկ կամրջի դեր ստանձնելուց, Թուրքիան իրեն առաջարկում է նաև որպես երկու քաղաքակրթությունների՝ Արեւմուտքի ու Արեւելքի «հաշտարար»: Թուրքիան գտնում է, որ միայն ինքն է ի վիճակի հաշտեցնելու այդ երկու

քաղաքակրթությունները եւ ԵՄ-ին անդամակցելու ճանապարհին շարունակ թմբկահարում է այդ մասին: «Turksam»-ի նախագահ Սինան Օղանի կարծիքով՝ Թուրքիան միակ երկիրն է, որը կարող է հավակնել Մերձավոր եւ Միջին Արեւելքն արդիականացնողի դերին եւ ունակ է այդ տարածաշրջանը «հաշտեցնել» Արեւմուտքի հետ:

Ստացվում է, որ Թուրքիան մտադիր է, Եվրոպայի ու Ասիայի միջեւ էներգետիկ եւ քաղաքակրթական կամուրջների դեր ստանձնելով, դառնալ Եվրասիա մայրցամաքի առանցքային խաղացողը:

**ԻՐԱՆԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ.  
ՀՆԱՐԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ  
ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

**2010 թվականի հիմնական արդյունքները**

Անցած՝ 2010 թվականը բավական դժվար տարի էր Իրանի համար: Երկրի ներքին եւ արտաքին կյանքում տեղի ունեցան կարեւոր զարգացումներ, որոնք որոշակի ռիսկեր էին պարունակում երկրի կայուն սոցիալ-տնտեսական եւ քաղաքական զարգացման համար:

Ներքաղաքական կյանքում ամրացան ծայրահեղ պահպանողականների դիրքերը, ինչի հիմնական դրսեւորումը «կենտրոնամետ» Մ.Մոթաքիի հեռացումն էր ԱԳՆ ղեկավարի պաշտոնից: Միեւնույն ժամանակ, ծայրահեղ պահպանողականներն ավելի սուր բնույթ հաղորդեցին իրենց հակամարտությանը հին «կենտրոնամետ» իշխանական վերնախավի հետ: 2010-ի նոյեմբերին իրանական դատարանի՝ երկրի նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի որդու ձերբակալության մասին որոշումը տարվա կարեւորագույն ներքաղաքական զարգացումներից կարելի է համարել, քանզի այն խորհրդանշում է Ռաֆսանջանիի շուրջ համախմբված «կենտրոնամետների» հարաբերական պարտությունը ներքաղաքական պայքարում:

Իրանի հետ առնչվող կարեւոր արտաքին քաղաքական զարգացումները հիմնականում կապված էին միջուկային ծրագրի հետ, որի իրագործումը ոչ միայն չհաղարեցվեց, այլեւ նոր թափ ստացավ: Թեհրանի նկատմամբ կիրառված նոր պատժամիջոցները որեւէ արդյունք չտվեցին: Տարվա կարեւոր արտաքին քաղաքական իրադարձություն կարելի է համարել նաեւ իրանա-ռուսական հարաբերությունների կտրուկ վատացումը՝ պայմանավորված Իրանի միջուկային ծրագրի հարցում Կրեմլի դիրքորոշման կոշտացմամբ եւ ԱՄՆ-ի հետ «իրանական քաղաքականության» համաձայնեցման գործընթացով:

**Ներքաղաքական հնարավոր զարգացումները 2011-ին**

2011 թվականը կարեւոր նշանակություն է ունենալու Իրանի ներքաղաքական կյանքում, քանի որ հենց այս տարվա ընթացքում է երկիրը պատրաստվելու 2012թ. փետրվարին անցկացվելիք խորհրդարանա-

կան ընտրություններին: Դրանք առաջին համապետական ընտրություններն են լինելու 2009-ից հետո, երբ Իրանի նախագահ վերընտրվեց Մ.Ահմադինեժադը, իսկ երկրում սկսվեց, հավանաբար, իսլամական հեղափոխությունից հետո ամենալուրջ քաղաքական ճգնաժամը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Իրանի քաղաքական կյանքի հիմնական գործող ուժերը սկսել են ակտիվորեն պատրաստվել գալիք ընտրություններին, որոնց ստվերի տակ է ընթանալու գալիք 12 ամիսների ողջ քաղաքական պայքարը: Վերջին ամիսներին Իրանի նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի դեմ սկսված տեղեկատվական եւ վարչական պայքարը խոսում է այն մասին, որ նախագահ Մ.Ահմադինեժադի շուրջ համախմբված ծայրահեղ պահպանողականները հենց Ռաֆսանջանիի շուրջ համախմբված կենտրոնամետներին են դիտում որպես իրենց հիմնական հակառակորդ: Նախկին նախագահի որդու՝ Մեհդի Հաշեմիի ձերբակալման մասին որոշումը լուրջ հարված է «կենտրոնամետներին», քանի որ Լոնդոնում գտնվող Հաշեմին մեղադրվում է ոչ միայն տնտեսական չարաշահումների եւ 2009-ի հակաիշխանական ցույցերի կազմակերպման, այլեւ բրիտանական ծառայությունների հետ համագործակցության մեջ: Կարելի է սպասել, որ 2011-ին կկարծրանա պետական լրատվամիջոցների կողմից ընդդիմության դեմ տարվող քարոզչությունը, որի հիմնական մեխը 2010-ին դարձան ընդդիմությանը բրիտանական հետախուզության հետ կապի մեջ մեղադրանքները:

Հարկ է նշել, որ «բրիտանական հետքի» մասին մեղադրանքներն Իրանում քաղաքական ավանդույթի նման բան են դեռելս 1960-ականներից, երբ ակնհայտ դարձավ, որ Մոսսադիկի կառավարությունը տապալվել է բրիտանական եւ ամերիկյան հետախուզությունների կողմից: Սակայն հարկ է նշել, որ ներկայիս իրանական ընդդիմության ղեկավարության մի մասն իրականում միջնորդավորված ձեւով կապված է Բրիտանիայի հետ. ընդդիմության առաջնորդներ Քյարուբիի եւ Մուսավիի որոշ ազգականներ բնակվում են Միացյալ Թագավորության տարածքում, ինչն էլ օգտագործվում է պետական քարոզչության կողմից: Բուն բրիտանական ծառայություններն, իրենց հերթին, յուր են լցնում Իրանի հակաբրիտանական կրակին. 2010-ի հոկտեմբերին բրիտանական ՄԻ-6 հետախուզության ղեկավար Ջ.Սոուերսի «իրանական միջուկային ծրագիրը պետք է կասեցնել ոչ միայն քննարկումներով, այլ նաեւ հետախուզական հատուկ գործողություններով» հայտարարությունից հետո Իրանը Մեծ Բրիտանիան պաշտոնապես հայտարարում է իր տարածքում ահաբեկչությունների (որոնց թվում՝ միջուկային

Ֆիզիկայի մասնագետների ոչնչացումը) հիմնական կազմակերպիչ:

Հարկ է սպասել, որ 2011-ին ընդդիմադիր դաշտը պետական քարոզչության կողմից ամբողջովին կնույնացվի պետական դավաճանների հետ, ինչը տարվա վերջին կարող է հիմք հանդիսանալ, որպեսզի Պահապանների խորհուրդն ընդդիմության ղեկավարներին եւ նրանց քաղաքական խմբերին պատգամավորության թեկնածուներ չգրանցի:

Միեւնույն ժամանակ, բուն ընդդիմադիր ճամբարում 2011-ին ակտիվ քաղաքական պայքար է ընթանալու պաշտոնական առաջնորդի դերի համար: Հավանաբար, այս պայքարի հիմնական մասնակիցներն են լինելու Մ.Յ. Մուսավին եւ Մ.Քյարուբին: 2009-ից հետո Մուսավիի դիրքերն ընդդիմության շրջանում թուլացել են, քանզի շատերը նրան մեղադրում են ցույցերի դուրս եկած հարյուր հազարավոր մարդկանց հեղափոխական ուժի չվերածելու մեջ. ակնհայտ է, որ 2009-ին թեհրանում նախահեղափոխական իրավիճակ էր, որի առաջնորդ Մուսավին հրաժարվեց այն հեղափոխականի վերածել: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարելի է ակնկալել, որ ավելի կոշտ հակաիշխանական դիրքորոշում ունեցող Մ.Քյարուբին 2011-ին կարող է ստանձնել իրանական քաղաքական ընդդիմության առաջնորդի դերը: Դրան հասնելու համար նա ամեն ինչ անում է. 2010-ի վերջին Քյարուբին արդեն ուղղակիորեն քննադատում էր երկրի հոգեւոր առաջնորդ Ա.խամենեյին՝ անվանելով նրան երկրում տիրող իրադրության հիմնական պատասխանատուն: Ընդդիմության ներսում ընթացող գործընթացների վրա կազդի նաեւ Հաշեմի Ռաֆսանջանիի դիրքորոշումը. կզմա՞նա ընդդիմության անմիջական պաշտպանությամբ, թե՞ որդու եւ իր դեմ սկսված արշավից հետո կհամաձայնի երկխոսության եւ համագործակցության ծայրահեղ պահպանողականների հետ:

Նշենք նաեւ, որ 2011-ին ներքաղաքական զարգացումների հիմնական ինտրիգներից կլինի նախկին նախագահ Մ.խաթամիի պահվածքը. կվերադառնա՞ նա մեծ քաղաքականություն, թե՞ ոչ: Շատերը գտնում են, որ 2013-ին հենց Մ.խաթամին պետք է դառնա ընդդիմության թեկնածուն նախագահական ընտրություններում:

### **Հնարավոր արտաքին քաղաքական զարգացումները**

Իրանի շուրջ ընթացող արտաքին քաղաքական զարգացումներում շարունակելու է գլխավոր դեր զբաղեցնել միջուկային ծրագրի հարցը: Սակայն այս ուղղությամբ 2011-ին որեւէ լուրջ տեղաշարժ սպասել չի

կարելի, քանի որ տարեսկզբին վերսկսման նշույլներ ցույց տված Իրան – «վեցնյակ» բանակցությունները կողմերին նորից բերելու են հաճախակի հանդիպումների, հարցի կարգավորման տարբերակների քննարկումների, իրարամերժ հայտարարությունների, որոնք Իրանի միջուկային ծրագրի կասեցման որեւէ լուրջ հնարավորություն չունեն: Հնարավոր է, որ 2011-ին ՄԱԿ ԱԽ-ի կողմից հերթական պատժամիջոցների փաթեթն ընդունվի Իրանի դեմ, որը դժվար թե կանգնեցնի միջուկային տերության վերածման ճանապարհով ընթացող Իրանին: Պետք է ընդգծել, որ 2011 թվականը նախընտրական է լինելու ոչ միայն Իրանի, այլ նաեւ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի համար, որտեղ 2012-ին նախագահներ են ընտրելու:

Եթե Ռուսաստանի վարած իրանական քաղաքականության տեսակետից այս հանգամանքը որեւէ լուրջ ազդեցություն դժվար թե ունենա, ապա Իրանի ու Միացյալ Նահանգների իշխանությունները 2011-ին հավանաբար կկոշտացնեն իրար դեմ ուղղված հայտարարությունները եւ քարոզչությունը, սակայն ստիպված կլինեն ավելի զգույշ գործել միմյանց դեմ, քանզի արտաքին քաղաքական ոլորտում արձանագրված լուրջ սխալները կարող են բացասաբար ազդել ընտրությունների հնարավոր արդյունքների վրա: Միեւնույն ժամանակ, պետք է սպասել, որ վերընտրման գնացող Բ.Օբաման հաջողության հասնելու համար պարտավոր է ավելի ապահով դարձնել ամերիկյան ռազմական ներկայությունն Իրաքում ու Աֆղանստանում, որպեսզի զսպի ամերիկյան ընտրողների դժգոհությունն իր արտաքին քաղաքականության անհաջողություններից: Նման արդյունքների հասնելու համար, ամենայն հավանականությամբ, 2011-ին Վաշինգտոնը կակտիվացնի երկխոսությունն Իրանի հետ՝ Իրաքում եւ Աֆղանստանում իրադրության կարգավորման համար աջակցություն ստանալու նպատակով: Հաշվի առնելով այն, որ ամերիկյան իշխանությունները եւ ազդեցիկ լրատվամիջոցներն արդեն չեն վարանում հայտարարել, որ առանց Իրանի տարածաշրջանում կայունություն դժվար թե հաստատվի, Վաշինգտոնն արդեն իսկ պատրաստ է բանակցությունների:

Իրանի համար 2011-ին, Իրաքից եւ Աֆղանստանից բացի, կարելու են լինելու հարաբերությունները Թուրքիայի հետ եւ իրադրությունը Պակիստանում: Թուրք-իրանական համագործակցությունն արդեն հասել է որոշակի բարձր մակարդակի, որից հետո կամ պետք է տեղի ունենա համագործակցության վերջնական ամրապնդում եւ ինստիտուցիոնալացում, կամ էլ դրանց որոշակի սառեցում: Հաշվի առնելով, որ



2010-ի երկրորդ կեսից Թուրքիայի վարչապետը դադարել է ԵՄ-ի հետ բանակցություններում պնդել «Նաբուկկոյին» Իրանի միանալու մասին, կարելի է ակնկալել, որ 2011-ին իրանա-թուրքական հարաբերությունների ամենակարեւոր տնտեսական մասի (իրանական բնական գազը Թուրքիայի տարածքով ԵՄ արտահանելու) ուղղությամբ որեւէ դրական տեղաշարժ չի լինի: Ինչ վերաբերում է Պակիստանին, ապա Իրանը 2011-ին ջանք չի խնայի, որպեսզի իրադրությունն այս երկրում չհանգեցնի այն բանին, որ իշխանության գան հակաիրանական եւ հակաշիական հայացքներ ունեցող ծայրահեղական սուննի իսլամիստները:

Այսպիսով, 2011 թվականն Իրանի համար թե՛ ներքաղաքական եւ թե՛ արտաքին քաղաքական զարգացումների տեսակետից չափազանց կարեւոր կլինի:

## **ՄԵՐԾԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ *Արաքս Փաշայան***

Մերծավոր Արեւելքը քրիստոնեության բնօրրանն է: Այստեղ են գտնվում քրիստոնեական ամենահին եկեղեցիներն ու դավանանքները, այստեղ են ապրում առաջին քրիստոնյաների հետնորդները: Քրիստոնեական համայնքներ կան Եգիպտոսում, Լիբանանում, Իրաքում, Սիրիայում, Չորդանանում, Պաղեստինում, Իրանում եւ այլուր: Միանշանակ ասել, թե քրիստոնյաները միշտ խաղաղ են ապրել իսլամական միջավայրում, չափազանցություն կլինի, սակայն հանդուրժողականության որոշակի մակարդակ, որպես կանոն, եղել է: Քրիստոնեական համայնքները կարողացել են որեւէ կերպ դավանել իրենց կրոնը, զործառել ազգային իրավունքները, բայց միշտ էլ մտավախություն են ունեցել իսլամական միջավայրում գոյատևելու հարցում: Այս առումով, Միջին Արեւելքի քրիստոնյաների շրջանում միշտ էլ եղել է Ամերիկա, Եվրոպա կամ Ավստրալիա արտագաղթելու միտումը:

Մինչեւ 2003-ը մոտ 1 միլիոնի հասնող Իրաքի քրիստոնեական համայնքն այսօր հազիվ հաշվվում է 400.000: Երբեմնի քրիստոնեաբնակ Մոսուլում այսօր քրիստոնյաներ գրեթե չեն մնացել: Չունենալով անվտանգության երաշխիքներ՝ Իրաքի քրիստոնյաները, այդ թվում՝ հայերը, Բաղդադից, ինչպես նաեւ երկրի այլ շրջաններից արտագաղթում են, իսկ նրանց մի մասը տեղափոխվում է հյուսիս՝ քրդական շրջաններ, որտեղ անվտանգության որոշակի երաշխիքներ կան: 2003-ից մինչ օրս բազմիցս մոլեռանդ մուսուլմանների թիրախ են դարձել քրիստոնեական եկեղեցիները, ահաբեկչության են ենթարկվել, առեւանգվել ու սպանվել մեծ թվով քրիստոնյաներ:

Վերջին շրջանում Իրաքի քրիստոնյաների դեմ իրականացված բռնություններից թերեւս ամենաողբերգականն ու մասշտաբայինը 2010-ի հոկտեմբերի 31-ին Բաղդադի ասորական կաթոլիկ եկեղեցու դեմ իրականացված հարձակումն էր, որին զոհ դարձավ մոտ 58 մարդ: Ահաբեկչության պատասխանատվությունն իր վրա վերցրեց Ալ-Կաիդայի հետ կապ ունեցող, Իրաքի իսլամական պետություն անունով ծայրահեղական մի կազմակերպություն: Հենց նույն կառույցը որոշ ժամանակ անց կոչ արեց թիրախ դարձնել Մերծավոր Արեւելքի քրիստոնյաներին՝ այս անգամ

Եգիպտոսի ղպտիական եկեղեցու «մեղքով», քանի որ այն իբր գերության մեջ է պահում ղպտի երկու նորադարձ իսլամադավան կանանց. փաստ, ինչը ղպտիական եկեղեցին հերքում է:

Ղպտի կանանց հետ կապված միջադեպը նոր լիցքեր հաղորդեց Եգիպտոսում կրոնական ծայրահեղական այն շարժմանը, որն ուղղված է ղպտիական եկեղեցու եւ մասնավորապես ղպտիների հոգեւոր առաջնորդ Շնուդա Երրորդ պատրիարքի դեմ: Պատահական չէ, որ 2010-ի դեկտեմբերի 31-ին Եգիպտոսի միջերկրածովյան Ալեքսանդրիա քաղաքի մզկիթներից մեկի՝ Ալ-Կաիդ Ջոհարի դիմաց ուրբաթօրյա աղոթքից հետո հավաքված մուսուլման մուլեռանդ ցուցարարները պահանջում էին հարձակում իրականացնել Սրբերի եկեղեցու (Ալ-Կիդդիսին) եւ Եգիպտոսի ղպտիների հոգեւոր առաջնորդի դեմ, քանի որ Սրբերի եկեղեցին նույնպես ներառված էր Ալ-Կաիդայի թիրախների ցուցակում:

Սա, ի դեպ, ղպտի բարձրաստիճան հոգեւորականի դեմ ուղղված առաջին ելույթը չէր: Բավական է հիշել 2010-ի հոկտեմբերի 8-ին Ալեքսանդրիայի մեկ այլ՝ Իբրահիմ մզկիթի դիմաց, կրկին ուրբաթօրյա աղոթքից հետո տեղի ունեցած հավաքը: 87-ամյա Շնուդա Երրորդն իր մուսուլման հակառակորդների կողմից դիտարկվում է իբրեւ արտաքին ուժերի կողմից հովանավորվող գործիչ, որը նպաստում է Եգիպտոսի մասնատմանը եւ ղպտիական անկախ պետության ստեղծմանը:

Եվ ահա, Ալեքսանդրիայում նշված ցույցի օրը, դեկտեմբերի 31-ի երեկոյան, այսինքն՝ Տարեմուտի գիշերը, երբ ղպտի հավատացյալները դուրս էին գալիս Սրբերի եկեղեցուն գրեթե ավարտված ամանորյա պատարագից, եկեղեցու դիմաց հզոր պայթյուն տեղի ունեցավ, որի հետեւանքով մոտ երեք տասնյակ մարդ զոհվեց, բոլորը՝ ղպտիներ, մոտ 70-ը վիրավորվեց:

Ահաբեկչության կազմակերպման տարբեր վարկածներ առաջ քաշվեցին: Ըստ առաջինի՝ ահաբեկչությունը կարող էր իրականացրած լինել Ալ-Կաիդայի հետ առնչություն ունեցող որեւէ կառույց՝ անձնասպան մահապարտի միջոցով: Նախագահ Յ.Մուբարաքն իր ելույթում նշեց, որ ահաբեկչությունն իրականացվել է արտաքին ուժերի կողմից, որոնք նպատակ ունեն ապակայունացնել իրավիճակը Եգիպտոսում, այդ իսկ պատճառով ահաբեկչությանը դիմագրավելն ինչպես մուսուլմանների, այնպես էլ քրիստոնյաների խնդիրն է:

Այն, որ Եգիպտոսը կարող էր թիրախ դառնալ արտաքին ուժերի համար, քիչ հավանական չէ, եթե հաշվի առնենք, որ աշնանն այդ երկրում անցկացվելու են նախագահական ընտրություններ: Նշենք, որ սոցիալական եւ քաղաքական տարաբնույթ խնդիրների մեջ ներքաշված

Եգիպտոսում օրակարգային է նոր իշխանության ձևավորման հարցը: Հայտնի չէ՝ արդյոք արդեն ծեր Հոսնի Մուբարաքը կառաջադրի՞ իր թեկնածությունը, թե՞ առաջ կքաշի որդուն՝ Գամալ Մուբարաքին. խնդիր, ինչը վերջին շրջանում հասարակական դժգոհությունների առիթ է դարձել:

Ըստ մեկ այլ վարկածի՝ ահաբեկչությունն իրականացվել է ավտոմեքենայում տեղադրված պայթուցիկի հետեւանքով, ինչը փաստում է, որ ղապտիներն անվտանգության հետ կապված լուրջ խնդիրներ ունեն: Ասվածի ապացույցն է նաեւ այն, որ իշխանություններն աչք են փակել նույն օրը մզկիթի առջև տեղի ունեցած ելույթի վրա: Ըստ այդմ՝ այն, ինչ տեղի է ունենում ղապտիներ հետ, մասնավորապես վերջին տարիներին, ոչ այլ ինչ է, քան երկրում սկիզբ առած հակաքրիստոնեական մոբիլիզացիայի արդյունք:

Նշված կարծիքի հետ, բնականաբար, համամիտ չէ Շնուրա Երրորդին իր ցավակցությունները հայտնած Ալ-Ազհարի իմամ Ահմադ Ալ-Տայիբը, որը համոզված է, որ ահաբեկչությունն ուղղված է Եգիպտոսի ազգային միասնության դեմ: Վերջինս առիթ ունեցավ նաեւ ասելու, որ Շնուրա Երրորդը, որպես կանոն, խոսում է միայն քրիստոնյաների դեմ ուղղված բռնությունների մասին՝ չանդրադառնալով նույնանման բռնությունների գոհ դարձող մուսուլմանների խնդրին:

Նշենք, որ ղապտիները Մերձավոր Արեւելքի ամենամեծ քրիստոնեական համայնքն են: Իսկ Եգիպտոսում, որտեղ կազմում են երկրի 80 միլիոն բնակչության 8-10 տոկոսը, պարբերական ճնշումների են ենթարկվում: Միայն վերջերս իշխանություններն արգելեցին ղապտիներին եկեղեցի կառուցել, ինչն առաջ բերեց բախումներ ղապտի ակտիվիստների ու ոստիկանության միջև: Ղապտիները բողոքում են՝ նշելով, որ Եգիպտոսում ամեն մի թաղամասում, նույնիսկ ամեն մի եկեղեցու մոտ մզկիթ կա, մինչդեռ քրիստոնյաներին, որոնք նույնպես այդ երկրի լիիրավ քաղաքացիներն են, եկեղեցաշինությունը, կարելի է ասել, գրեթե արգելվում է: Բացի այդ, պարբերական են դարձել ղապտիական բիզնեսը բոյկոտելու կոչերը:

Հատկանշական է, որ Եգիպտոսում ընտրություններից առաջ ղապտիների հետ կապված միջադեպեր են տեղի ունենում, ինչը, ըստ ամենայնի, նպատակ ունի հակադրել ղապտիների մասնակցությանը հասարակական-քաղաքական գործընթացներին, մեկ այլ դեպքում՝ օգտագործել ղապտիական գործոնը՝ քաղաքական հարցեր լուծելու կամ անկայունություն ստեղծելու համար:

Չմայած ղապտիների շրջանում առկա դժգոհություններին, Եգիպտոսում քրիստոնեական հուզումները հազվադեպ երեւույթ են, ինչը կապված

է նաեւ Եգիպտոսի՝ ավտորիտար երկիր լինելու հանգամանքի հետ: Սակայն Սրբերի եկեղեցու դեմ իրականացված ահաբեկչությունն ի հայտ բերեց դժգոհության հուժկու ալիք, ինչն ապագայում կարող է ունենալ նորանոր դրսեւորումներ՝ նպաստելով ղպտիական ազգային շարժման ակտիվացմանը եւ քրիստոնեական մոբիլիզացիային: Ահաբեկչությանը հաջորդող օրերին բախումներ տեղի ունեցան ղպտիների եւ եգիպտական ոստիկանության ու անվտանգության ուժերի միջեւ, ցուցարարների դեմ կիրառվեց արցունքաբեր գազ: Տեղի ունեցան ցույցեր ու երթեր, որոնց մասնակիցները տանում էին ծանր փայտե խաչեր՝ ի ցույց դնելով, որ պատրաստ են զոհվել հանուն Սուրբ խաչի:

Ի դեպ, վերջին տասը տարիների ընթացքում նշված միջադեպը ղպտիների դեմ իրականացված ամենամեծ ահաբեկչությունն էր: Նմանօրինակ վերջին ահաբեկչությունը տեղի է ունեցել մոտ տասը տարի առաջ՝ 2000-ի հունվարի 2-ին, Եգիպտոսի հարավում գտնվող եւ 70 տոկոս ղպտի բնակչություն ունեցող Կոշեի բնակավայրում, որտեղ սպանվեցին մեծ թվով ղպտիներ: Ի տարբերություն այլ քրիստոնյաների, այդ թվում՝ հայերի, որոնց եգիպտացիներն ինչ-որ առումով հյուր են համարում, ղպտիների նկատմամբ միանգամայն այլ վերաբերմունք կա: Մուսուլմանները որոշակի վտանգ են տեսնում էթնիկ եգիպտացիներ համարվող ղպտիներից, նրանց մրցակիցներ համարում: Սակայն այս հարցում մոտեցումները տարբեր են:

Այս տեսանկյունից ուշագրավ է դեպքի կապակցությամբ Եգիպտոսի մուսուլմանների արձագանքը: Ղպտիներին ցավակցություն հայտնեց Եգիպտոսում ամենամեծ հեղինակություն վայելող կրոնաքաղաքական, ընդդիմադիր շարժումը՝ «Մուսուլման եղբայրները», որը կոչ արեց իր հավատակիցներին՝ պաշտպանել քրիստոնեական եկեղեցիները: Իսկ Կահիրեի քրիստոնեական Շուբրա թաղամասում տեղի ունեցավ մոտ չորս հազարանոց հանրահավաք՝ ուղղված ահաբեկչության դեմ, որին մասնակցում էին թե՛ քրիստոնեական, թե՛ իսլամական տարբեր շրջանակների ներկայացուցիչներ:

Հատկանշական է, որ ղպտիների Սուրբ Ջատիկի օրը՝ հունվարի 7-ին, բազմաթիվ մուսուլմաններ իրենց աջակցությունը հայտնեցին ղպտիներին: Նրանք ղպտիական եկեղեցիների դիմաց շղթաներ կամ, այլ կերպ ասած՝ մարդկային պատեր էին կազմել՝ ձգտելով ի ցույց դնել, որ պատրաստ են իրենց վրա վերցնել այն հարվածները, որ կուղղվեն ղպտիներին: Ղպտիների Սուրբ Ծննդյան միջոցառումներին մասնակցեցին եգիպտացի արաբ հասարակական-քաղաքական եւ մշակութային բազմաթիվ գործիչներ, այդ թվում՝ Հոսնի Մուբարաքի երկու որդիները: Այդ օրը մոտ 70.000

ուստիկաններ դպտիական եկեղեցիների մոտ եւ այլ վայրերում ապահովում էին քրիստոնյաների անվտանգությունը:

Ղպտիական եկեղեցու դեմ իրականացված ահաբեկչությունը միջազգային մեծ արծագանք գտավ: Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզին Նոր տարվա կապակցությամբ դիմելով երկրի կրոնական համայնքներին՝ նշեց, որ չի պատրաստվում հանդուրժել Մերձավոր Արեւելքում քրիստոնյաների դեմ իրականացվող կրոնական գտումները, քանի որ ինչպես Իրաքում, այնպես էլ Եգիպտոսում, Արեւելքի քրիստոնյաները գտնվում են իրենց տանը: Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդը, որը վերջին շրջանում բազմիցս անդրադարձել է Մերձավոր Արեւելքի քրիստոնյաների խնդիրներին, խոսելով միջադեպի մասին, կրոնական ազատությունների պակասը համարեց սպառնալիք միջազգային անվտանգությանը: Ողջույնի ուղերձով դիմելով Սուրբ Ծնունդը հունվարի 7-ին նշող արեւելյան քրիստոնեական եկեղեցիներին եւ ակնհայտորեն դպտիներին հասցեագրված պատգամով՝ նա կոչ արեց չկորցնել ոգու կորովը փորձության ժամին:

Իսկ ահա վերջերս Open Doors միջազգային մարդասիրական կազմակերպությունը հրապարակեց 2011թ. Քրիստոնյաների համար վտանգավոր երկրների ցուցակը, որում տեղ է գտել 52 երկիր: Դրանց մի հատվածը իսլամական երկրներ են՝ Իրանը, Աֆղանստանը, Սաուդյան Արաբիան, Սոմալին, Իրաքը, Թուրքիան եւ այլն: Ձեկույցում նշվում է, որ ներկա պահին ողջ աշխարհում ճնշումներ են իրականացվում 100 միլիոն քրիստոնյաների դեմ:

Մերձավոր Արեւելքում քրիստոնյաների դեմ ճնշումներն ու բռնությունները տարաբնույթ ենթադրությունների տեղիք են տալիս: Ամեն պարագայում, դրանք շատ ավելի քաղաքական, քան կրոնական գործոններով են պայմանավորված: Այն, որ ցանկացած ուժային կենտրոն կարող է իրականացնել ահաբեկչություն՝ ներկայացնելով այն Ալ-Կաիդայի անունից, այլեւս նորություն չէ: Այնպես որ, այս պարագայում եւս, Ալ-Կաիդայի անունը ոչինչ չի կարող ասել:

Որ իսլամական հասարակություններում կան հակաքրիստոնեական մտայնություններ, գաղտնիք չէ: Իսլամական երկրներում, շատ դեպքերում, քրիստոնյաները դիտարկվում են որպես «հինգերորդ շարասյուն», որի միջոցով Արեւմուտքը փորձում է միջամտել տարածաշրջանի երկրների ներքին գործերին: Այդպես է եղել նաեւ գաղութատիրության շրջանում, երբ քրիստոնյաները շատ դեպքերում թիրախ են դարձել մուսուլմանների կողմից: Պատահական չէ, որ Իրաքում ամերիկյան օկուպացիայի շրջանում բռնություններ էին իրականացվում այն քրիստոնյաների նկատմամբ,

ովքեր որեւէ կերպ համագործակցում էին ամերիկացիների կամ եվրոպացիների հետ: Այդ իսկ պատճառով եվրոպական կառավարությունների հայտարարությունները՝ ի պաշտպանություն քրիստոնյաների, կարող են նաեւ հակառակ նշանակությունն ունենալ:

Ալեքսանդրիայի ահաբեկչությունը մեկ անգամ եւս եկավ փաստելու, որ քրիստոնյաների եւ մուսուլմանների միջեւ փոխհամաձայնության եւ փոխադարձ վստահության հետ կապված լրջագույն խնդիրներ կան, որոնք ավելի շատ քաղաքական բովանդակություն ունեն, հետեւաբար դժվար հաղթահարելի են: Պատահական չէ, որ այսօր առանձին կարծիքներ են հնչում այն մասին, որ մի օր Մերձավոր եւ Միջին Արեւելքից քրիստոնեությունը կարող է վերջնականապես դուրս մղվել:

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍՈՒԴԱՆ.**  
**ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ**  
**Արտաշես Տեր-Հարությունյան**

Չնայած հունվարի 9-15-ը Հարավային Սուդանում տեղի ունեցած անկախության հանրաքվեի պաշտոնական արդյունքները հրապարակվելու են փետրվարի 6-14-ը ընկած ժամանակահատվածում, սակայն արդեն այսօր կարելի է խոսել հանրաքվեի արդյունքի մասին: Հանրաքվեի կայանալու փաստը շատ ավելի կարեւոր է, որովհետեւ գրեթե ոչ մեկի կասկածը չի հարուցում, որ մասնակիցների գերակշիռ մասը քվեարկել է Սուդանից Հարավային Սուդանի անկախացման օգտին: Մասնավորապես, հանրաքվեին դիտորդական առաքելություն իրականացնող ամերիկյան ու եվրոպական մի շարք կազմակերպությունների անցկացրած exit-poll-երի համաձայն, քվեարկածների 90-95%-ը «այո» է ասել Հարավային Սուդանի անկախությանը:

**Հարավային Սուդան. տվյալներ**

Թեև Հարավային Սուդանի ու Հյուսիսային Սուդանի կամ պարզապես՝ Սուդանի միջև սահմանները վերջնականապես ճշտված չեն (կան վիճահարույց որոշ հատվածներ), բայց միջազգային մի քանի կազմակերպություններ հիմք են ընդունում հետևյալ տվյալները՝ տարածքը գրեթե 620 հազ. կմ<sup>2</sup> (մոտավորապես Ֆրանսիայի չափ, եւ կազմում է ընդհանուր Սուդանի տարածքի ավելի քան 24%-ը), բնակչությունը՝ 8 մլն 260 հազ. (Սուդանի բնակչության գրեթե 19%-ը):

Հարավային Սուդանն արդեն ունի իր դրոշը, հիմնը, սակայն դեռ չունի պաշտոնական անվանում: Ներկայում շրջանառվում են մի քանի տարբերակներ՝ Հարավային Սուդան, Նոր Սուդան, Կուշի Հանրապետություն, Նեղոսի Հանրապետություն: Մայրաքաղաքն է Ջուբան (բնակչությունը՝ 2008թ. մոտ 250 հազ.):

Հարավային Սուդանում բնակվում են ավելի քան 200 էթնիկ խմբեր, պաշտոնական լեզուն անգլերենն է, լայնորեն տարածված է նաև խոսակցական արաբերենը, տեղի լեզուներից ամենատարածվածը դինկան (Dinka) է, որով, տարբեր հաշվարկների համաձայն, խոսում է 2-3 մլն մարդ:



Միջազգային վերջին տվյալների համաձայն, Սուդանում բնակչության մոտ 70%-ը դավանում է սուննի իսլամ, 25%-ը՝ տեղի հավատալիքներ, իսկ 5%-ը՝ քրիստոնեություն: Քրիստոնյաների մեծ մասը բնակվում է հենց Չարավային Սուդանում, եւ դա է պատճառը, որ հատկապես ամերիկյան լրատվամիջոցներում Չյուսիսային ու Չարավային Սուդանների միջեւ պայքարը շատ հաճախ ներկայացվում է որպես պայքար մահմեդականների ու քրիստոնյաների միջեւ: Չարավային Սուդանում քրիստոնյաների թվի վերաբերյալ հստակ տեղեկություններ ներկայում չկան: Սակայն հայտնի է նաեւ, որ Չարավային Սուդանում քրիստոնյաների թիվն անընդհատ աճում է՝ քրիստոնյա միսիոներների գործունեության շնորհիվ: Չարավսուդանցի քրիստոնյաները հիմնականում կաթոլիկ են կամ անգլիկան:

### Նավթի խնդիրը

Տարբեր գնահատականների համաձայն, Սուդանի նավթահանքերի մոտ 80%-ը գտնվում է Չարավային Սուդանի տարածքում:

Նավթի արդյունահանումը Սուդանում համեմատաբար նոր է: Խարթումը «սեւ ոսկի» սկսել է արտահանել 1999-ից: Միացյալ Նահանգների էներգետիկայի նախարարության տվյալների համաձայն, 2010թ. իր նավթի պաշարներով Սուդանն Աֆրիկայում գրավում էր 5-րդ տեղը՝ իր 5 մլրդ բարել ասպացուցված նավթի պաշարներով<sup>1</sup>: 2009թ. հայտարարվեց նաեւ Սուդանում բնական գազի պաշարների հայտնաբերման մասին, սակայն փորձագետների գնահատմամբ՝ դրանց սահմանափակ ծավալը դեռ թույլ չի տալիս խոսել բնական գազի կոմերցիոն արդյունահանման մասին:

Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացրած գնահատականի համաձայն, 2009թ. նավթից ստացվող եկամուտները Սուդանի՝ ողջ արտահանումից ստացվող եկամուտների 90%-ն էին կազմում: Նույն թվականին պետական եկամուտների մեջ նավթից ստացվող եկամուտները Խարթումի պարագայում կազմում էին 65%, իսկ Ջուբայի դեպքում՝ 98%:

ԱՄՆ էներգետիկայի նախարարության հրապարակած վերջին տվյալների համաձայն, 2009թ. Սուդանն օրական արդյունահանում էր մոտ 485 հազ. բարել նավթ, իսկ սպառում էր 90 հազ. բարել, տարբերությունը՝ 395 հազ. բարել, արտահանվում էր: 1998-ից հետո, երբ Սուդանն անգամ նավթ էր ներմուծում՝ իր պահանջները ծածկելու համար, սուդանական նավթի արդյունահանումն աճել է ավելի քան 10 անգամ:

Դարձյալ վերջին՝ 2009թ. տվյալներով՝ Սուդանի նավթի հիմնական ներկրողներն են Չինաստանը՝ օրական 250 հազ. բարել կամ արտահանվող ողջ սուդանական նավթի գրեթե 65%-ը<sup>2</sup>, երկրորդ տեղում է Ինդոնեզիան՝ օրական 60 հազ. բարել, երրորդ տեղում է Ճապոնիան՝ օրական 50 հազ. բարել:

Չինաստանը նաեւ առաջատար տեղ է զբաղեցնում սուդանական նավթահանքերի կառավարման գործում: Սուդանում նավթահանքերը բաժանված են բլոկների: 1-ին, 2-րդ եւ 4-րդ բլոկները, որոնք 2009թ. միասին օրական արդյունահանում էին 180 հազ. բարել նավթ, գտնվում են Grater Nile Petroleum Operating Company կոնսորցիումի կառավարման ներքո, ուր 40% բաժնեմասը (մեծությամբ առաջինը) պատկանում է չինական China National Petroleum Corporation-ին: Grater Nile Petroleum Operating Company կոնսորցիումին է պատկանում նաեւ Սուդանի միակ նավթամուղը՝ Greater Nile Oil Pipeline-ը, որը սուդանական նավթի հանքերը կապում է Կարմիր ծովում գտնվող Պորտ Սուդան նավահանգստային քաղաքի հետ:

3-րդ ու 7-րդ բլոկները, որոնք 2009թ. միասին օրական արդյունահանում էին 240 հազ. բարել նավթ, գտնվում են մի քանի ընկերություններից բաղկացած Petrodar կոնսորցիումի կառավարման ներքո, որի 41% բաժնեմասը (կրկին՝ մեծությամբ առաջինը) դարձյալ պատկանում է չինական նույն ընկերությանը, իսկ 3%-ը՝ չինական մեկ այլ ձեռնարկությանը՝ Sinopec-ին:

Նշենք, որ առաջին հերթին նավթի գործոնով է բացատրվում այն աջակցությունը, որ անցած տարիների ընթացքում Պեկինը ցուցաբերում էր ու այժմ էլ ցուցաբերում է Սուդանի կենտրոնական՝ Խարթումի կառավարությանը միջազգային ասպարեզում, երբ այն ենթարկվում էր ԱՄՆ ու արեւմտեվրոպական երկրների ճնշմանը՝ թե՛ Հարավային Սուդանի, թե՛ Դարֆուրի<sup>3</sup> հարցերով:

### **Յուսիս–Հարավ հակամարտությունը**

Մեծ Բրիտանիայի իշխանության ներքո գտնվելու ընթացքում՝ 1899–1956թթ. Յուսիսային ու Հարավային Սուդանները կառավարվում էին որպես առանձին վարչական միավորներ, եւ բրիտանական զաղութային իշխանության վերջին շրջանում անգամ ծրագիր կար Հարավային Սուդանը միացնել հարեւան Ուգանդայի հետ:

Սուդանի անկախացումից ի վեր՝ 1956թ., Սուդանի հյուսիսային ու հարավային մասերը երկու անգամ պատերազմել են միմյանց հետ: Այդ

պատերազմները հայտնի են Սուդանի առաջին ու երկրորդ քաղաքացիական պատերազմներ անվամբ (1955–1972թթ. եւ 1983–2005թթ.): Սահմեդական Յուսիսի նպատակն էր՝ ամրապնդել իր իշխանությունը կիսաինքնուրույն Չարավի նկատմամբ, ընդլայնել տարածքները եւ ամբողջական վերահսկողություն սահմանել Սուդանի հարավի նավթահանքերի վրա: Մյուս կողմից՝ Չարավն էլ ձգտում էր մեծացնել իր ինքնուրույնության աստիճանը՝ հնարավորության դեպքում հասնելով անկախության:

Արդյունքը եղան մարդկային մեծաքանակ զոհերը. առաջին քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ կես միլիոն մարդ, երկրորդի՝ երկու միլիոն:

2005թ., գլխավորապես Միացյալ Նահանգների ճնշման արդյունքում<sup>4</sup> ու միջնորդությամբ, կողմերը կնքեցին համաձայնագիր, ըստ որի էլ այս տարվա հունվարին Չարավային Սուդանում պետք է անցկացվեր հանրաքվե՝ պարզելու երկրամասի հետագա ճակատագիրը:

Ըստ 2005թ. կնքված համաձայնագրի, հանրաքվեի դրական արդյունքի դեպքում Չարավային Սուդանն իր անկախությունը կկարողանա հռչակել արդեն այս հուլիսի 6-ին, երբ լրանում է 6-ամյա համաձայնագրի ժամկետը:

### **Չետեություն**

Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ վերջին երեք տարիների ընթացքում սա արդեն երկրորդ դեպքն է՝ Կոսովոյից հետո, ինչ ԱՄՆ ուղղակի քայլերի հետեւանքով անկախություն է ձեռք բերում որեւէ երկրամաս: Թերեւս, մենք ականատեսն ենք մի գործընթացի, որը կոչված է սպասարկելու ԱՄՆ գաղափարական ու աշխարհաքաղաքական շահերը: Եթե, իրոք, այդպես է, ապա առաջիկայում Կոսովոյին ու Չարավային Սուդանին կարող են հետեւել նոր երկրամասեր՝ Արեւմտյան Սահարան, Դարֆուրը եւ այլն: Նշվածը, հետեւաբար, չի կարող իր ազդեցությունը չունենալ միջազգային հարաբերությունների տրամաբանության վրա:

<sup>1</sup> Առաջին տեղում Լիբիան է՝ 44,3 մլրդ բարել, հետո Նիգերիան՝ 37,2 մլրդ բարել, երրորդ տեղում է Ալժիրը՝ 12,2 մլրդ բարել, չորրորդն Անգոլան է՝ 9,5 մլրդ բարել եւ վերջապես Սուդանը՝ 5 մլրդ բարել: Նույն աղբյուրի ներկայացմամբ, դեռ 2006թ. Սուդանի նավթի ապացուցված պաշարները գնահատվում էին 563 մլն բարել, այսինքն՝ մոտ 9 անգամ քիչ: Ըստ Սուդանի կառավարության, երկրի նավթի ապացուցված պաշարները կազմում են 6 մլրդ բարել:

2. 2009թ. Սուդանից ներկրված նավթը կազմում էր Չինաստանի ներկրած ամբողջ նավթի 6%-ը:

3. Սուդանի արեւմտյան մասում գտնվող Դարֆուրի տարածքն ավելի քան 493 հազ. կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ մոտ 6 մլն (2004թ.): Հակամարտությունը Դարֆուրում սկսվեց 2003թ. փետրվարին, երբ տարածաշրջանում գործող Արդարություն ու հավասարություն շարժումը (ԱՅՇ) եւ Սուդանի ազատագրության շարժումը զինված պայքար սկսեցին Սուդանի կենտրոնական կառավարության (Խարթումի) դեմ՝ մեղադրելով վերջինիս Դարֆուրում բնակվող ոչ մահմեդական (այդ թվում՝ քրիստոնյա) բնակչության դեմ իրականացվող էթնիկ զտումների ու ցեղասպանության մեջ: Միաժամանակ, ԱՅՇ-ն նպատակ ուներ եւ ունի Դարֆուրում հաստատել ինքնավարություն: Միջազգային հանրության ճնշման արդյունքում, 2010թ. փետրվարին Սուդանի կենտրոնական կառավարությունը եւ ԱՅՇ-ն զինադադար կնքեցին ու բանակցություններ սկսեցին՝ վերջնական հաշտության հասնելու նպատակով: Բանակցությունները, սակայն, շուտով ընդհատվեցին. կողմերը մեղադրեցին միմյանց զինադադարը խախտելու մեջ:

Տարբեր գնահատականներ կան Դարֆուրում տեղի ունեցած ռազմական գործողությունների հետեւանքով մարդկային զոհերի թվի վերաբերյալ՝ 20 հազարից մինչեւ մի քանի հարյուր հազար:

4. Հաազայում գործող Միջազգային քրեական դատարանի կողմից 2009թ. եւ 2010թ. Սուդանի նախագահ Օմար ալ-Բաշիրի նկատմամբ քրեական գործերի հարուցումը (Դարֆուրում տեղի ունեցած ցեղասպանության մեղադրանքով), դիտորդների գնահատմամբ՝ Հարավային Սուդանի հարցում Խարթումից զիջում կորզելու նպատակ էին հետապնդում:

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գարեգին Նժդեհ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ .....	1
Ռուբեն Մելքոնյան ԹՈՒՐՔԻԱ. ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՋ .....	12
Բենիամին Պողոսյան ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ – 2011. ՀԱՎԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ .....	17
Հայկ Գաբրիելյան ԹՈՒՐՔԻԱՆ 2011-ԻՆ. ՀԵՌԱՆԿԱՐԻ ՈՒՐՎԱԳԾԵՐ .....	22
Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ. ՀՆԱՐԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ .....	29
Արաքս Փաշայան ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՈՋԵՎ .....	34
Արտաշես Տեր-Հարությունյան ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍՈՒԴԱՆ. ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ .....	40

Շապիկին պատկերված է  
**Մռավ Լեռը** (Արցախ)

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Սելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մմնուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՍՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: